

**ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ**

**ՍԵՊՏԵՄԲԵՐԻ  
 ՃՈՒԹՊՈՂԱՅԻՆ  
 ՍԻՐՈՒՇՏՈՒՔԷՆ ԵՏՔ,  
 «ՍԱՐԸ ԿԵԼԻՆ»-Ի  
 ԽԱՅԹՈՑԸ**

**ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Անգարա լոյս տեսնող «Պիր-կիւն» տարածուն բերքի աշխատակիցներէն էօգեմ՝ Չոտեան, ընթացիկ ամսուան սկիզբներուն, սրտցաւորէն հետագօտած, ուսումնասիրած եւ բացայայտած է եղեռնական բովանդակութեամբ տակաւ շրջաբերական մը, որ խորով ու ձեռով, փաստօրէն կը վտանգէ բրահայ համայնքի ֆիզիկական ապահովութիւնը, ինչպէս նաեւ, կը բացայայտէ բուրբ պետական աւագանիի՝ հայ ժողովուրդի դէմ ունեցած նենգամիտ նախատրամադրուածութիւնը: Հարցը կը վերաբերի անշուշտ, 1915-ին հայոց դէմ գործուած Ցեղասպանութեան:

Թուրքիոյ Սպայակոյտի նախագահութիւնը պատրաստած է Հայկական հարցի նուիրուած մոլեռանդական ժայպաւէն մը, որ կը կրէ «Սարը Կելին» անունը:

Նիւթը վերցուած է, բրահայոյ ընդհանրապէս բամբ, 1915-ի «ՊԱՏԱՆԿԱՆՆԵՐԷՆ» (ընդգծու մը մեզմէ. Ա.Գ. ՝ Թուրքիոյ Սպայակոյտը նպատակ ունեցած է բացայայտել Հայկական Հարցի ներքին ծախսերը: Անշուշտ, «պատահարներ» ըսելով, պէտք է հասկնալ հայոց դէմ գործուած Ցեղասպանութեան թիւերը, գործիքները, այսօր, աւելի քան ինչ տասնամեակէ ի վեր, յամառօրէն կը մերժէ նախնայ, հակառակ անոր որ, ան իր այս պնդանքներով բամբ, ինքզինքն կը դարձնէ կրկնակի ծիծաղելի եւ դատապարտելի՝ միջազգային հանրային կարծիքին եւ պատմութեան դատաստանին առջեւ:

Այս կապակցութեամբ, համաճարակի արձանագրեման ներառուած իրողութիւնը որ ԱՄՆ-ի շարքին, ինքզինքն թուրքիոյ հարազատ դաշնակից համարող Իսրայէլն անգամ, կը սպառնայ նախնայ 1915-ի հայոց դէմ գործած ցեղասպանութիւնը, եթէ ան չի վերանայի Կազայի արշաւանքը ցեղասպանական գործողութիւն համարող իր «ամբաստանութեան» վրայ:

Այս երեւոյթը ինքնին ցոյց կու տայ արդարեւ, որ թուրքիոյ կողմէ հայոց դէմ գործուած 1915-ի Ցեղասպանութիւնը, ուսումնասիրուած, փաստուած եւ ընդունուած պատմական իրողութիւն է նաեւ Դաւիթի երկրին համար: Ուստի, եթէ Իսրայէլ, տակաւին չի յայտարարեր իր համոզումը ԱՅԴ կապակցութեամբ, թէ՛ ինք իրողապէս կը նախնայ ու կը դատապարտէ՝ հայոց դէմ թուրքիոյ գործած Ցեղասպանութիւնը, այդ մէկն ինքնին,

**ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ՝  
 ՀԱՋԱՐԱՒՈՐ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ  
 ՓԵՏՐՈՒՄ 14-Ի ՀԱՆՐԱՀԱՒԱՔԻՆ  
 ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՂԱՍԱՊԵԱՆ ԿԸ ԺԱՄԱՆԷ ԼՈՍ ԱՆՃԵԼՍ՝ ԵԼՈՅԹ  
 ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՍԱՐ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻԻ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻԹԵԱՆ**



Լիբանանահայեր Պէյրութի Հանրն թաղամասէն անցնելով կ'ուղղուին դէպի հանրահաւաքի վայրը

Շաբաթ, Փետրուար 14-ին Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի կեդրոնական՝ Նահատակաց հրապարակին վրայ տեղի ունեցաւ «Մարտ 14» համախմբուած կազմակերպած հսկայ հանրահաւաքը, պը նուիրուած էր նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութեան 4-րդ տարելիցին:

Ըստ միջազգային մամուլի գործակալութիւններուն, հանրահաւաքին մասնակցած են հարիւր հազար



Պետական նախարար Ժան Օղասապեան

Հնչակեան դրօշներով ուղղուած են դէպի հանրահաւաքի վայրը:

Մեծ եղած է նաեւ «Ազատ Հայերու» համախմբուած համակիրներով կազմուած թափօրը, որ քալելով Պուրճ Համուտի փողոցներով, մասնակցած են հանրահաւաքին:

Հանրահաւաքի ընթացքին ելոյթներ ունեցած են «Մարտ 14»-ի անդամները:

Մեծ եղած է նաեւ հանրահաւաքին մասնակցող Հայ քաղաքացիներու թիւը: Արդարեւ, հազարաւորներ համախմբուած են Հնչակեան Կուսակցութեան խալիլ Պատուի կեդրոնին առջեւ, ուրկէ հսկայ թափօրով՝ Լիբանանեան եւ

**ՑԵՂԱՄԱՆՈՒԹԵԱՆ  
 ԲԱՆԱՁԵՒԻ ՆՈՐ  
 ՆԱԽԱՁԵՆՈՒԹԻՒՆ  
 ԳՈՆԿՐԵՍԷՆ ՆԵՐՍ**

Ս.Դ.Հ.Կ. Հայ Ամերիկեան Խորհուրդը եւ ամբողջ ամերիկահայութիւնը կ'ողջունեն ամերիկեան Գոնկրէսէն ներս սկսած նոր նախաձեռնութիւնը՝ Հայկական Ցեղասպանութեան բանաձեւի կապակցութեամբ:

Ներկայացուցիչներու Տան Հայկական Համախմբուած համախաղաղահայեր՝ Մարք Քըրք (հանրապետական, Իլինոյզ) եւ Ֆրանք Փարոն (դեմոկրատ, Քալիֆորնիայ) ինչպէս նաեւ գոնկրէսականներ Ճորճ Ռատանովիչ (հանրապետական, Քալիֆորնիայ) եւ Ատամ Շիֆ (դեմոկրատ, Քալիֆորնիայ) Ներկայացուցիչներու Տան մէջ տարածեցին նամակ մը, խնդրելով երկու կուսակցութիւններու անդամ գոնկրէսականներու ստորագրութիւնը, որպէս հովանաւոր Հայկական Ցեղասպանութեան բանաձեւի ընդունման նոր նախաձեռնութեան:

**«ՍԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԿԱՅԲԷՋԸ ԿԸ  
 ԴԱԴՐԵՑՆԷ «GOOGLE»-Ի ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի պաշտօնաթերթ «Մասիս» շաբաթաթերթի ինթըրնէթային կայքէջը, որ կ'օգտագործուի հազարաւոր ընթերցողներու կողմէ, վերջերս պայմանագիր կնքելով ինթըրնէթի որոնման «Google» ընկերութեան հետ, սկսած էր տեղադրել այս ընկերութեան կողմէ տրամադրուող ծանուցումները:

«Մասիս» անցեալ շաբաթ, դադարեցուց «Google»-ի այդ ծանուցումները, երբ ի յայտ եկաւ թէ անոնց մէջ կը տեսնուին նաեւ թրքական ծանուցումներ, որոնց վրայ սեղմողները կ'առաջնորդուին Հայկական Ցեղասպանութիւնը ժխտող եւ հակահայ քարոզչութիւն կատարող կայքէջեր:

Միւս կողմէ, նկատելի է որ հայկական այլ կայքէջերու վրայ, ընդհանրապէս հայաստանեան, կը շարունակեն երեւիլ թրքական այդ ծանուցումները:

Հաւանական է որ, հայկական այլ կայքէջերէն շատեր, տակաւին չեն անդրադարձած վերջերս սկսած այս երեւոյթին, մանաւանդ որ, «Google»-ի ծանուցումները կը տեսնուին անորոշ հերթականութեամբ:

**ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Յառաջիկայ Յունիս 7-ին տեղի պիտի ունենան Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները:

Այն լիբանանահայերը, որոնք կ'ուզեն մասնակցիլ այդ ընտրութիւններուն, կրնան հեռաձայնել Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան գրասենեակը՝ 626-398-0506 թիւին եւ ստանալ յաւելեալ մանրամասնութիւններ:

Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

# ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Այն, ինչ կատարում է Մարտի 1-ի տասը գոհերի սպանութիւնները «բացայայտելու» ասպարէզում, ոչ միայն չի տեղադրում որեւէ տրամաբանութեան մէջ, այլև, կարող ենք վստահաբար պնդել, իր առանձնատուկ ցինիզմով բացառիկ է ամբողջ աշխարհում: Տեսէք, թէ ինչ է կատարում:

Ապացուցուած եւ պաշտօնապէս հաստատուած է, որ Մարտի 1-ին առնուազն երեք մարդ սպանուել է «Չերիոմուխա» զինատեսակից: Յայտնի է նաև, որ այդ օրը նման զինատեսակ ունեցել է կոնկրետ չորս հոգի: Այսինքն՝ նրանց անուանագրանումները յայտնի են: Հետեւաբար, այդ չորս հոգուց առնուազն մէկը մարդասպան է: Կարող է՝ երեք հոգի են մարդասպաններ (ամէն մէկը մի հոգու է սպաննել), կարող է՝ երկու հոգի, իսկ եթէ մարդասպանը մէկն է, ապա նա ըստ էութեան մանեակ է (հնարաւոր չէ պատահաբար երեք հոգու սպաննել): Սա, կրկնում ենք, անհերքելի եւ պաշտօնապէս ընդունուած իրողութիւն է: Հիմա իշխանութիւնները յայտարարում են, թէ ըստ այս-այս-այս փորձագիտական եզրակացութիւնների՝ հնարաւոր չէ պարզել, թէ այդ չորս հոգուց քանիսն են մարդասպաններ եւ ովքեր են նրանք: Շատ լաւ,

հնարաւոր չէ՝ ուրեմն հնարաւոր չէ: Բայց չի շէք. խօսքը կամ մոլորաբարի, կամ մի քանի մարդասպանների մասին է: Եւ ահա, երբ Մարտի 1-ի քննչական խմբի ղեկավար Վահագն Յարութիւնեանին հարցնում են, թէ որտե՞ղ են այդ չորս հոգին, նա շատ հանգիստ պատասխանում է. «Սովորականի նման ծառայութիւնը շարունակում են»: Հասկացա՞ք: Իշխանութիւնները, իմանալով (եւ պաշտօնապէս ընդունելով), որ խօսքը մարդասպանների մասին է, նրանց թող են տալիս «սովորականի նման» ծառայութիւնը շարունակել: Այսինքն, Հայաստանի ոստիկանութեան համակարգում մարդասպան կամ մարդասպաններ կան, նրանց շրջանակը յայտնի է եւ շատ նեղ՝ ընդամէնը չորս հոգի, բայց իշխանութիւնների մտքով անգամ չի անցնում այդ մարդկանց հեռացնել ոստիկանութիւնից (թէկու՞ պրոֆիլակտիկ նկատառումներով):

Հիմա պատկերացրէք այսպիսի իրավիճակ: Ասենք՝ յայտնի է դառնում, որ դպրոցներից մէկում մի քանի ուսուցիչներ պարբերաբար սեռական բռնութիւններ են իրականացնում երեխաների նկատմամբ: Տնօրէնն էլ ելոյթ է ունենում ծնողների առջեւ ու ասում. «գիտէ՞ք», ցաւօք՝ մեր ուսուցիչներից մի քանիսն իսկապէս նման

բան են արել, բայց քանի որ հնարաւոր չէ «նոյնականացնել» եւ պարզել, թէ կոնկրետ որ ուսուցիչներն են արել դա, մենք ունենք մէկին աշխատանքից ազատել չենք կարող, նրանք պիտի շարունակեն իրենց գործը: Խնդրում եմ այսուհետ եւս ձեր երեխաների դաստիարակութիւնը վստահել մեր մանկավարժական կոլեկտիւին»: Պատկերացրեցի՞ք: Ինչ էք կարծում, դրանից յետոյ որեւէ աշակերտ կը մնա՞յ այդ դպրոցում, եւ ընդհանրապէս՝ ունէ՞ մէկը կը վստահի՞ այդ «մանկավարժական կոլեկտիւին»:

Նոյնն էլ ոստիկանութեան դէպքում է: Հայաստանում կը գտնուի՞ գոնէ մի մարդ, ով կը վստահի ոստիկանութեանը, եթէ պաշտօնապէս յայտարարում է, որ այդ ոստիկանութեան շարքերում կան մարդասպաններ, բայց տեխնիկական պատճառներով հնարաւոր չէ բացայայտել նրանց ինքնութիւնը, հետեւաբար՝ նրանք «սովորականի պէս շարունակում են իրենց ծառայութիւնը»: Եւ իրաւունք ունենալ արդեօք քաղաքացիները չենթարկուել այդ «ոստիկանների» ապօրինի հրամաններին. ի՞նչ երաշխիք կայ, որ իրենց առջեւ հենց այդ մարդասպանը չէ: Մանաւանդ՝ բոլորն էլ հասկանում են, որ այդ չորս հոգու միջից մար-

դասպան(ներ)ին բացայայտելն իրականում խաղաղար է: Պարզապէս իշխանութիւններին առիթ էր պէտք՝ նրանց չբացայայտելու համար, եւ իրենք ի վերջոյ գտան այդ առիթը: Եւս մի հանգամանք. յստակ յայտնի է, որ ինչ-որ ստորաբաժանման անդամները երեք մարդ են սպաննել: Մի՞թէ հնարաւոր չէր գոնէ այդ ստորաբաժանման ղեկավարին, ասենք, նկատողութիւն յայտարարել: Թէ՞ այդ ղեկավարին նոյնպէս հնարաւոր չէ «նոյնականացնել»:

Այս ամէնը միայն մի բացատրութիւն ունի. իրականում իշխանութիւնները հենց իրենք են հրամայել ուղիղ նշանառութեամբ կրակել մարդկանց վրայ, եւ եթէ «ձեռքներին ճար լինէր»՝ բոլոր կրակողներին կը պարզեւատրէին մեղալներով: Աւելին. վստահ ենք, որ Մարտի 1-ից յետոյ իշխանութիւնները լաւ էլ «ծառայողական քննութիւն» են անցկացրել, բայց՝ պարզելու համար, թէ ովքե՞ր են բոլորովն հրամանը եւ հրաժարուել կրակել ժողովրդի վրայ: Իշխանութիւններին նման «տատանողներ» պէտք չեն:

Մի խօսքով, ակնյայտ է, որ Մարտի 1-ի ոճրագործութեան անմիջական կատարողները կը բացայայտուեն միայն իշխանափոխութիւնից յետոյ: Եւ հենց այդ իշխանափոխութիւնը կանխելու ձգտումն է պատճառը, որ ռեժիմը կրծքով պաշտպանում է իր ոճրագործներին:

**ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**  
«ՁՐՐՈՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

## ՔԱՆԱԿՆ ՈՒ ՈՐԱԿԸ

«Յաւն այն է, որ կատակերգութիւնը դարձել է ապրանք, եւ բանաստեղծը չարմարում է այն թատրոնի պահանջներին, որը գնում է նրա ստեղծագործութիւնը»: Այս խօսքերն ասուած չեն հայկական հեռուստաընկերութիւններով ցոյց տրուող սերիալների մասին, չնայած, ինչպէս տեսնում էք, կիրառելի են նաեւ այդ դէպքի համար: Մէջբերումն արուած է մօտ 4 դար առաջ գրուած մի շատ յայտնի գրքից, որի հեղինակը իսպանացի գրող Միգել Դե Սերվանտեսն է: Այսինքն՝ եթէ նպատակ է դրուում, այս կամ այն նկատառումից ելնելով, ապահովել մարդկանց, հանդիսատեսների, մասնակիցների քանակը, ապա պէտք է յանուն այդ նպատակի գոհաբերես քո ապրանքի կամ ասելիքի որակը: Ու չկայ միանշանակ պատասխան՝ ո՞րն է աւելի ճիշդ՝ սակաւաթիւ որակեալ, թէ բազմաթիւ ու անորակ հանդիսատեսը:

Քաղաքականութեան մէջ նոյնպէս առաջ է գալիս նոյն երկրնտրանքը: Մասնաւորապէս, Հայաստանում, որտեղ քաղաքական եւ քաղաքացիական ինստիտուտները չեն կայացել, ընդդիմութիւնն իր նպատակներին հասնելու այլ ճանապարհ, կարծես թէ, չունի, բացի ժողովրդական զանգուածային շարժումից: Եւ նման շարժումների առաջնորդների առաջ օբեկտիւորէն կանգնում է քանակի եւ որակի յարաբերակցութեան ինդիքը: Չափաւոր, գոտայ համակիրների միջոցով հնարաւոր չէ ապահովել շարժման արդիւնաւէտութիւնը: Անհրաժեշտ են ակտիւ, «պասիոնար» խմբեր, որոնք կը բարձրացնեն հասարակական ջերմաստիճանը եւ իրենց հետեւից կը տանեն մնացած զանգուածին: Նման խմբերի խորհրդանիշը Հայաստանում, իհարկէ, «բետեռ կանայք» են, որոնք ջարդեցին Հրանդ Ռսկան-

եանի գլուխը, այնուհետեւ մի քանի տարի անց յարձակուեցին Բաբգէն Արարքեցեանի եւ Արա Սահակեանի վրայ, իսկ այժմ հերթապահում են Հիւսիսային պողոտայում եւ անէծքներ են յղում բոլոր նրանց հասցէին, ովքեր չեն կիսում Կոնգրեսի գաղափարները: «Բետեռ կանայք», իհարկէ, պայմանական տերմին է՝ նման խմբերում կան նաեւ տղամարդիկ, երիտասարդներ, ուսանողներ եւ այլն:

Բնական է՝ որքան շատանում է քանակը, այնքան ընկնում է որակը: Որքան ակտիւ են «բետեռները», «բազէները», «խուլիգնները», «այնքան շատ են հիասթափուում մտածող մարդիկ: Դրանց ճիշդ համամասնութիւնը պահպանելը շարժման առաջնորդներից մեծ հմտութիւն է պահանջում: Այստեղ կայ եւս մի վտանգ, որը

կը ցանկանայի ներկայացնել օրինակով՝ ոչ հեռուոր անցեալից: 1996-ին ՌԴ ընտրութիւնների ժամանակ, երբ Ելցինի իշխանութեան դէմ պայքարում էր Զիլգանովի կոմկուսը, կար եւ մի կոմունիստական խումբ, որը ղեկավարում էր ոմն Վիկտոր Ամպիլով: Վերջինս հանդէս էր գալիս խիստ անհաւասարակչու, ծայրայեղական դիրքերից, փառաբանում էր Ստալինին, մեղադրում էր Զիլգանովին անհետեւողականութեան մէջ եւ այլն: Ելցինեան քարոզչութիւնը հաճոյքով տեղ էր տալիս Ամպիլովին ու նրա զինակիցներին, քանի որ նրանք «խրտնեցնում» էին ընդդիմութեան առաջնորդի չափաւոր կողմնակիցներին: Կամայ, թէ ակամայ՝ մինչեւ հիմա էլ պարզ չէ:

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**  
«ԱՌԱՒՕՏ»

## ԴԺՐԱԽՏՆԵՐԸ

«World Value Survey» (WVS) հիմնադրամի գեկոյցի համաձայն՝ աշխարհի 97 երկրների շարքում Հայաստանը տեղ է գտել ամենաթափախտ երկրների եռեակում՝ գիջելով միայն Զիմբաբուէին: WVS-ը նման հետազոտութիւններ անում է պարբերաբար:

Հայաստանի բնակչութեան երջանկութեան ինդեքսը գնահատուել է -1.80: Հարկ է ընդգծել, որ Հայաստանի յայտնուելը Զիմբաբուէի կողքին, ուր գործազրկութիւնը մօտենում է 90 տոկոսի, իսկ ինֆլացիան կազմում է տարեկան մօտ 250 միլիոն տոկոս, բոլորովին էլ պատահական չէ: Թէ Հայաստա-

նին եւ թէ Զիմբաբուէին միաւորում է այն փաստը, որ երկու երկրներում էլ 2008-ին տեղի են ունեցել նախագահական ընտրութիւններ, եւ երկու դէպքում էլ դրանք ընթացել են խայտառակ խախտումներով ու ընտրակեղծիքներով: Երկու երկրներում էլ ընտրութիւններից յետոյ տեղի են ունեցել բողոքի զանգուածային հանրահաւաքներ, որոնք գէնքի ուժով ցրուել են, եւ երկու դէպքում էլ գոհեր են եղել: Ուշագրաւ է, որ Հայաստանից աւելի «երջանիկ» են այնպիսի երկրներ, ինչպէս Ուզանդան, Ռուանդան, Տանզանիան եւ այլն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՈՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

**ՄԱՄԻՍ**  
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՇՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
ՏՕԹԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Յեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.«ԱՆԻՄԱՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԵԱՄԲ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԽԱԲԵՑԻՆ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Ներքին գործերի նախկին նախարար, Մարտի 1-2-ի իրադարձություններն ուսումնասիրող հանրային յանձնաժողովի անդամ Սուրեն Աբրահամյանը «Ազատու թիւն» ռադիոկայանի հետ գրոցում վստահեցրեց, որ հնարաւոր է պարզել, թէ ովքեր են օգտագործել «Չերչոմուխա-7» կոչուող յատուկ միջոցը, որից մարտեան իրադարձությունների ժամանակ սպանուեցին երեք երիտասարդներ՝ 23-ամեայ Տիգրան Խաչատրեանը, 29-ամեայ Գուրգենյանը եւ 35-ամեայ Արմէն Ֆարմանեանը:



Մարտի 1-ի դէպքերու հանրային յանձնաժողովի անդամ Սուրեն Աբրահամյան

Սուրեն Աբրահամյանի փոխանցմամբ, «անգամ ամենամիջին կարգի քննիչը», եթէ ձեռքի տակ ունենայ յատուկ միջոց կիրառած գինուորների տեղակայման եւ դիակների յայտնաբերման վայրերը, մի քանի քննչական գործողությունների արդիւնքում կարող է պարզել, թէ կոնկրետ ովքեր են մեղաւոր տեղի ունեցած սպանությունների մէջ: Ներքին գործերի նախկին նախարարը նաեւ գտնում է, որ յատուկ միջոց օգտագործած գինուորների մեղքը այնքան մեծ չէ, որքան այն կիրառելու «հրաման տուողինը»:

«Այս իրավիճակում ամենամեծ պատասխանատուն հրաման տուողն է, որովհետեւ գինուորը նոյնիսկ, իրենց ներկայացմամբ՝ այդ ընդհանուր թոհուրոհի մէջ, իրաւունք չունէր ինքնուրոյն գէնքն օգտագործել: Եւ յետոյ՝ «Չերչոմուխա»-ով կարելի է մարդ սպաննել, եթէ դիմահար ձեռով կրակեն, եւ այդ առումով՝ ո՞վ է հրաման տուել, ո՞ր գնդից էր, ո՞ր գումարտակից էր, որտե՞ղ էր տեղաբաշխուած: Այս հարցերին պատասխանելու փոխարէն այդ անիմաստ փորձաքննությունն իսկ չէր պետք, ամբողջ յանձնաժողովի անդամներին խաբեցին», - պնդեց Սուրեն Աբրահամյանը:

տուել, ո՞ր գնդից էր, ո՞ր գումարտակից էր, որտե՞ղ էր տեղաբաշխուած: Այս հարցերին պատասխանելու փոխարէն այդ անիմաստ փորձաքննությունն իսկ չէր պետք, ամբողջ յանձնաժողովի անդամներին խաբեցին», - պնդեց Սուրեն Աբրահամյանը:

Ներքին գործերի նախկին նախարար Սուրեն Աբրահամյանի պնդմամբ, այս գործը կոծկելը մէկ նպատակ ունէր՝ պատասխանատու թիւնից ազատել իշխանութիւններին, որովհետեւ, եթէ պարզուի, թէ ո՞վ է հնացած «Չերչոմուխա» օգտագործելու հրաման տուել, ապա ողջ շրջան կը բացայայտուի, քանի որ «նոյն այդ հրաման տուողն էլ ինքնագլուխ չի գործել»: Համակարգը չաւ հիմնադրով՝ Սուրեն Աբրահամյանը նշում է, որ նման գործողություններ կատարուում են միայն ընդհանուր հրամանի պարագայում:

«ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՉՈՒՆԵՆԱԼՈՎ ՆԵՐՔԻՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹԻՒՆ, ՉԻ ՑԱՆԿԱՆԱՅ ԿՈՐՑՆԵԼ ՆԱԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹԻՒՆԸ»

«Բոլոր քաղաքատարկեալներին ազատ արձակելու առումով կասկածում եմ, բայց 7-ի գործով անցնող քաղաքական գործիչների մասով շատ հնարաւոր է, թէ եւ կարող է եւ նման բան չլինել», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ անդրադառնալով Մարտի 1-ի դէպքերի հետ կապուած բանտարկուած ընդդիմադիրների հետագայ ճակատագրին, կարծիք յայտնեց «կովկասեան լրատուամիջոցների ինստիտուտի» ղեկավար, քաղաքագէտ Ալեքսանդր Իսկանդարեանը: Նրա խօսքով, «քաղաքատարկեալներին» առկայութիւնը կամ բացակայութիւնը, դա քաղաքական պայքարի մի մասն է եւ իշխանութիւնն ու ընդդիմութիւնը դրան հենց այդպէս էլ վերաբերում են:

չի ցանկանայ քաղաքատարկեալներին պահելով կորցնի լեգիտիմությունը նաեւ միջազգային կառույցների աչքում», - ընդգծեց քաղաքագէտը, յաւելելով, որ իր այդ կարծիքի համար հիմք է ծառայում այն, որ իշխանութիւնն այսօր իրեն աւելի վստահ է զգում, քան ամիսներ առաջ:

Հարցին, թէ ի՞նչու ՀՀ իշխանութիւնները բանտարկեալներին ազատ չարձակեցին նոր տարուց առաջ, եւ արդեօ՞ք այն ժամանակ նրանք իրենց աւելի անվտանգ էին զգում, Ե. Բոգոսեանը պատասխանեց. «Ես հիմա էլ չեմ հասկանում, թէ ինչու իշխանութիւնը չարագացրեց այդ լուծումը եւ ազատ չարձակեց քաղաքատարկեալներին»:

Իսկ եթէ իշխանութիւնները մինչեւ Ապրիլ, այնուամենայնիւ, ազատ չարձակեն քաղաքատարկեալներին, ինչպէս դրան կ'արձագանքի ԵՆ-ն, հարցին էլ արձագանքեց, նշելով, որ այդ պարագայում ԵՆ-ն որոշակի քայլերի կը գնայ, քանի որ «Եւրոպայի խորհուրդն էլ իր պահանջները կատարման համար սահման ունի ու եթէ դրանք չկատարուեն՝ կը վարկաբեկուեն այդ որոշումները»:

Իսկ ահա, Ա. Իսկանդարեանի կարծիքով, ոչինչ էլ տեղի չի ունենայ, եթէ Հայաստանը չկատարի այդ պահանջը: Նրա ներկայացմամբ, ԵՆ-ն կը շարունակի որոշակի ճնշումներով գիշումներ կորզել Հայաստանից, բայց կոնկրետ պատժամիջոցների չի դիմի:

ԱԳԱՐԱԿԻ ՊՂԻՆՁԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ ԵՆ ՈՒՂԱՐԿՈՒԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցներին ծանուցազրեր են ուղարկուել, որտեղ նշուած է, թէ նրանց վերջին աշխատանքային օրը Մարտի 9-ն է: Կոմբինատի սեփականատէր GeoProMining ընկերութեան արտաքին կապերի պատասխանատու Ռուզաննա Գրիգորեանը «Ազատու թիւն»



Ագարակի պղինձի գործարանը դադարած է աշխատելէ

ռադիոկայանին տեղեկացրեց, թէ ծանուցազրեր ստացողների թուերը դեռ ամփոփուած են եւ աշխատանքից զրկուողների վիճակագրութիւնը յստակ կը լինի միայն Փետրուարի վերջին:

Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարեանը վերջերս հանդիպել է կոմբինատի ղեկավարութեան հետ: Նրա տեղեկութիւններով՝ «1450 աշխատակիցներից, ըստ պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարութեան կազմած պլանի, մնալու է 370 աշխատակից»:

Քաղաքապետը ներկայացրեց նաեւ Հայաստանի կառավարութեան իրականացրած քայլերը՝ կոմբինատին աջակցելու եւ աշխատակիցների ազատուելու յետաձգելու հետ կապուած. - «Մօտ 2 միլիոն դոլարի կարգի մեր կառավարութիւնը [կոմբինատին] հետ է տուել իրենց

մուծած շահութահարկի կանխավճարը եւ այս վերջին երկու ամիսը իրենք դրա շնորհիւ կարողացան երկարաձգել աշխատանքի պրոցեսը»:

Այլուհանդերձ, ագարակցիները կառավարութեան նախաձեռնած քայլերն անբաւարար են համարում:

«Իրենք իրենց համար Երեւանում որոշում են, ինչ իրենց յարմար է, այդպէս էլ անում են», - «Ազատու թիւն» ռադիոկայանի կարծիք յայտնեց Ագարակի հրապարակում հաւաքուած կոմբինատի աշխատակիցներից մէկը:

Միւսները դժգոհեցին կոմբինատի սեփականատէրերից, պնդելով, թէ GeoProMining ընկերութեան կողմից նշանակուած օտարերկրացի կառավարիչները չեն հոգում տեղացի աշխատակիցների մասին:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՐՁԱՔԱՐ ԼԻՆԵԼ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՄԱՐ

Երեւանի քաղաքապետի ընտրութիւնը խոստանում է դառնալ Հայաստանի իշխանութեան հերթական փորձաքարը: Քաղաքապետի ընտրութեանը մասնակցելու մասին յայտարարել է Ժառանգութիւն կուսակցութիւնը: Նոյնպիսի յայտարարութիւն է արել Ժողովրդական կուսակցութիւնը: Հայ Ազգային կոնգրեսի ներկայացուցիչները նոյնպէս յայտարարում են, որ ընդդիմութիւնը քննարկում է այդ ընտրութեանը մասնակցելու հարցը, եւ որոշումը յստակ կը լինի, երբ ճշդուի ընտրութեան ժամկէտը: Ինչ վերաբերում է իշխանութեանը մաս կազմող կուսակցութիւններին, ապա այստեղ բաւական անորոշ վիճակ է, քանի որ Երեւանը «համեղ պատառ է», իսկ «դանակաւորները»՝ շատ:

րեց, թէ մասնակցելու է ընտրութեանն ու պատրաստուած է իր համամասնական ցուցակը:

Ակնյայտ է նաեւ, որ իշխանութիւնը չի կարող «բախտի քմահաճոյքին» յանձնել Երեւանի քաղաքապետի ընտրութիւնը: Երեւանն այսօր գրեթէ ողջ հանրապետութիւնն է բոլոր առումներով: Միւս կողմից, Երեւանի ընտրուած քաղաքապետն արդէն իսկ քաղաքական լուրջ գործօն է դառնում, որը նոյնպէս, հաշուի առնելով Հայաստանեան իշխանութեան որակներն ու փոխափայլութիւնը, դառնում է պոտենցիալ «գլխացաւանք»: Ըստ այդմ, Երեւանի քաղաքապետի պաշտօնում պէտք է լինի մէկը, ով ոչ միայն կարողանայ գլուխ հանել քաղաքի խնդիրներին, կարողանայ ապահովել քաղաքում իրագործող լայնածաւալ ծրագրերի շարունակականութիւնը, այլեւ չունենայ քաղաքական յաւակնութիւններ, լինի փոխգիշումային ֆիզուր կողմից իշխանութեան համար:

Հենց իշխանական ճամբարի խնդիրն էլ կարող է դառնալ Երեւանի քաղաքապետի առաջիկայ ընտրութեան գլխաւոր ինտրիգներից մէկը: Կողմիցիայի անդամ կուսակցութիւններից Բարգաւաճ Հայաստանի ներկայացուցիչները յայտարարում են, թէ ընտրութեանն իրենց մասնակցութեան մասին հարցին կը պատասխանեն այն ժամանակ, երբ հարցը կը քննարկի կողմիցիան եւ պարզ կը լինի կողմիցիայի դիրքորոշումը՝ միտանական, թէ առանձին առանձին մասնակցութիւն կարողա՞ծ քով: Սակայն, կողմիցիայի անդամ մէկ այլ կուսակցութիւն՝ Օրինաց երկիրը օրերս յայտարար

Չի բացառուում, որ ի վերջոյ իշխանութիւնը կանգ առնի հենց ներկայիս քաղաքապետի թեկնածութեան վրայ, որի պաշտօնավարման շրջանը նշանաւորուեց քաղաքում լայնածաւալ ծրագրերի իրագործմամբ: Միւս կողմից, ներկայիս քաղաքապետը երբեւէ քաղաքական յաւակնութիւններ չի ցուցաբերել եւ կողմիցիոն շրջանակներում կարող է դառնալ հենց այդ փոխգիշումային թեկնածուն:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՄՏԱՅՈՒԳՈՒԹԻՒՆ ԵՆ ԶԱՅՏՆԵԼ ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՅԱՒԱՔԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄ

Մարտի 1-ին ընդդիմութեան հանրահաւաքն արգելելու՝ Երեւանի քաղաքապետարանի որոշման վերաբերեալ մտահոգութիւն են յայտնել Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի հարցով համագեկուցողներ Ջոն Պրեսկոտը եւ Ժորժ Կոլմբիէն:

Եւրատրոհրդի պաշտօնական կայքէջի տեղեկատուութեան համաձայն, համագեկուցողները շեշտել են, որ վեհաժողովը բազմիցս կոչ է արել Հայաստանի իշխանութիւններին յարգել խաղաղ հաւաքներ անցկացնելու իրաւունքը եւ անհարկ սահմանափակումներ չկիրառել՝ «յատկապէս ընդդիմութեան կողմից կազմակերպուող մի-

ջոցառումների համար տարածք չատկացնելու հարցում»:

Երեւանի քաղաքապետարանը անցած շաբաթ արգելել է Մատենադարանին յարող տարածքում կամ Հիւսիսային պողոտայում ընդդիմութեան հանրահաւաքի անցկացումը՝ պատճառաբանելով, թէ Մարտի 1-ին Մատենադարանում մշակութային միջոցառում է նախատեսուած, իսկ Հիւսիսային պողոտայում շինարարական աշխատանքների պատճառով զանգուածային միջոցառման անցկացումը «անվտանգ չէ»:

Ընդդիմութեան ներկայացուցիչները, սակայն, յայտարարել են, որ հանրահաւաքը եւ երթը, այդուհանդերձ, անցկացուելու են:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԱԽՕՍՆԵՐ Է ՓՆՏՈՒՄ ԱԴԻԲԵԶԱՆՈՒՄ

Թուրքիայի Նեւշէհիր քաղաքի համալսարանի ռեկտոր Ֆիլիպ Քիլիչը յայտարարել է, թէ իր ղեկավարած բուհում հիմնուել է հայոց լեզուի եւ գրականութեան բաժանմունք, որը, սակայն, դեռեւս չի վիճակի չէ դասընթաց կազմակերպել, քանի որ չի գտնուում հայերէնին տիրապետող դասախօսներ:

«Չաման» օրաթերթի փոխանցմամբ՝ Քիլիչը ասել է, թէ չնայած երկրի Բարձրագոյն կրթութեան խորհուրդը տուել է նման բաժանմունք բացելու թոյլտուութիւն, համալսարանը դժուարութիւններ է բախուում հայալեզու դասախօսներ գտնելու հարցում:

«Մենք չենք կարողանում թեկնածուներ գտնել Թուրքիայում: Այժմ մենք դասախօսներ ենք փնտրում Ադրբեյջանում: Բաժանմունքը կարիք ունի առնուազն երեք դասախօսի, որպէսզի ուսանողների ընդունելութիւն յայտարարի եւ դասընթաց կազմակերպի», - յայտարարել է թուրքական համալսարանի ռեկտորը:

Ըստ տարբեր գնահատականների՝ Թուրքիայում ներկայումս կա 40-ից մինչեւ 70-հազարանոց հայ համայնք:

«2008 թուականի նախագահական ընտրութիւններից յետոյ եւ մարտիմէկեան սպանդից յետոյ Հայաստանում իշխանութիւնը էսպէս թուլացել է», - շարունակեց նա: «Եթէ, օրինակ, 2005, 2006, 2007 թուականներին իշխանական համակարգը մի մոտոլիտ բուրգ էր, ապա դա այժմ այդպէս չէ: Եւ իշխանութեան ներսում հակասութիւնները

ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԷԱՊԵՍ ԹՈՒԼԱՑԵԼ Է»

Հայ Ազգային Կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսինեանի կարծիքով, Սերժ Սարգսեանը «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան համագումարի ելոյթում շրջանցել է «պետութեան առջեւ կանգնած լուրջ մարտահրաւէրները»:

Անգամ Լեւոնային Ղարաբաղին վերաբերող հատուածում, ընդդիմութեան ներկայացուցիչի խօսքով, Սերժ Սարգսեանը «բովանդակային որեւէ բան չասաց»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ այդ դէպքում որն էր «Բարգաւաճ Հայաստան»-ի համագումարին մասնակցելու նպատակը, Արման Մուսինեանը արձագանքեց. - «Ես կարծում եմ, որ Սերժ Սարգսեանը դրանով (մասնակցելով համագումարին) ուզեց ցոյց տալ, թէ ում է պատկանում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Կամ՝ ում է պատկանում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը»:

Պատասխանելով հարցին, թէ արդեօք Սերժ Սարգսեանը դեռեւս ինդիք ունի ցոյց տալու, որ քաղաքական դաշտը իր վերահսկողութեան տակ է, եւ որ Ռոբերտ Քոչարեանն այլեւս ազդեցութիւն չունի, Մուսինեանը ասաց. - «Ես կարծում եմ, (Սերժ Սարգսեանը նման ինդիք) ունի եւ ապագայում էլ առիթներ կ'ունենայ ցոյց տալու, որ միանձնեայ ղեկավարը ինքն է: Միայն ցոյց տալու»:

«2008 թուականի նախագահական ընտրութիւններից յետոյ եւ մարտիմէկեան սպանդից յետոյ Հայաստանում իշխանութիւնը էսպէս թուլացել է», - շարունակեց նա: «Եթէ, օրինակ, 2005, 2006, 2007 թուականներին իշխանական համակարգը մի մոտոլիտ բուրգ էր, ապա դա այժմ այդպէս չէ: Եւ իշխանութեան ներսում հակասութիւնները



Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսինեան

գնալով կը խորանան, եւ դուք կը տեսնէք դրանց ցայտուն դրսեւորումները»:

Այդպիսի դրսեւորումներից է համարում Արման Մուսինեանը անցած շաբաթ Հայաստանի փոխտնտեսականապետ Գէորգ Մհերեանի սպանութիւնը:

Ընդդիմութեան ներկայացուցիչ համոզմամբ, իշխանութեան ներսում հակասութիւններ կան անգամ «քաղբանտարկեալների հարցում».

- «Կայ իշխանութիւնում մի թեւ, որը փորձում է հասնել համաներման, եւ կայ իշխանութեան մի թեւ՝ առաւել ռադիկալ, որը ամէն ինչ անում է, որպէսզի քաղբանտարկեալները մնան բանտում»:

Համաներման մասին, չիշեցնենք, բաւական յաճախ խօսել են Դաշնակցութեան ներկայացուցիչները:

Մարտի 1-ին ծրագրուած հանրահաւաքը, Արման Մուսինեանի խօսքով, ամենայն հաւանականութեամբ կը կայանայ Մատենադարանի մօտ:

ՀԱԶԱՐԱԲՈՐ ԼԻԲԱՆԱՆԱՅՅԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՓԵՏՐՈՒԲԱՐ 14-Ի ՀԱՆՐԱՅԱՒԱՔԻՆ

Շարունակուած էջ 1-էն

14»-ի անկախական շարժումի ղեկավարներ՝ Սատտ Հարիրի, Ուալիտ ճոնպուլաթ, Էմին Ժմայէլ, Սամիր Ժաժա, Տորի Շամուն եւ ուրիշներ: Ելոյթ ունեցողները ողջունած են Հարիրիի սպանութեան առթիւ կազմուած միջազգային դատարանի հիմնադրումը, որ նախատեսուած է Մարտ 1-ին: Սատտ Հարիրի յայտարարած է թէ, պատրաստ է ընդունելու դատարանի որոշումները՝ ինչ որ ալ ըլլան անոնք:



Յունիս 7-ին նախատեսուած խորհրդարանական ընտրութիւններէն մի քանի ամիս առաջ տեղի ունեցող հանրահաւաքի ընթացքին բազմաթիւ կոչեր հնչած են այդ ընտրութիւններուն խուռնեւրամ մասնակցելու եւ Լիբանանի անկախութեան եւ գերիշխանութեան համար պայքարող թեկնածուներուն ի նպաստ քուէարկելու համար:

շարժումի Քալիֆորնիոյ մասնաճիւղի հրաւերով, այս շաբաթավերջին Լոս Անճելըս պիտի ժամանէ Լիբանանի կառավարութեան Հայ անդամ, Պետական նախարար Ժան Օղասապեան: Ան յառաջիկայ Կիրակի, Փետրուար 22-ին ելոյթ պիտի ունենայ Ռաֆիք Հարիրիի տարեկիցին առթիւ տեղի ունենալիք հանդիսութեան ընթացքին:

Նախարար Օղասապեան իր կարճ կեցութեան ընթացքին հանդիպումներ պիտի ունենայ նաեւ հայկական կազմակերպութիւններու հետ:

ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՂԱՍԱՊԵԱՆ ԿԸ ԺԱՄԱՆԷ ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ ՄԻԼԱ ԿՈՂՄԷ, «ՄՈՒՍԹԱՔԱՅԱԼ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՆ. «ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԽՕՍԵԼԸ ՎԱՂԱԺԱՍ Է»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

«Ամերիկայի ձայն»-ի հարցազրոյցում Բրայզան ասել է, թէ մօտ է Ղարաբաղեան հիմնախնդրի վերաբերեալ համաձայնագրի մշակումը, որը պէտք է բխի տարածքային ամբողջականութեան սկզբունքից եւ նաեւ ընդդրկի ինքնորոշման իրաւունքի ու ուժի չկիրառման հայեցակէտերը:

«Հասկանալի չէ, ո՞րն է այս յայտարարութեան նպատակը, բայց տպաւորութիւն է ստեղծուած, որ նման մեկնաբանութիւն կարելի էր անել միայն խանգարելու համար բանակցային գործընթացին, որն ընթանում է մտադրեան առաջարկութիւնների շուրջ: Այդ առաջարկները հիմնուած են միջազգային իրաւունքի երեք հաւասարագոր

սկզբունքների վրայ՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում, ինքնորոշման իրաւունք եւ տարածքային ամբողջականութիւն», - «Արմենայրեւ» լրատուական գործակալութեան հարցին ի պատասխան՝ ընդգծել է Տիգրան Բալաբեանը եւ յաւելել. - «Հայկական կողմը բազմիցս յայտարարել է, որ հակամարտութեան առանցքային հարցը Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի ճանաչումն ու իրականացումն է»:

Մէկ այլ՝ աղբբեջանական APA գործակալութեանը տուած հարցազրոյցում Մեթիւ Բրայզան անդրադարձել է Պետդեպարտամենտում իր պաշտօնի առաջիկայ փոփոխութեան վերաբերեալ հաղորդումներին, նշելով, թէ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը կը զբաղուի այդ հարցով, երբ հարկ կը համարի. - «Գիտեմ, որ պէտք է զբաղուեմ այլ աշխատանքով, սակայն ինչպիսին կը լինի այն եւ երբ տեղի կ'ունենայ դա՞ դեռ չգիտեմ»:

Բրայզան նշել է, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ամերիկեան համանախագահն է արդէն չորս տարի, ինչը «համարուած է մեծ ժամկէտ նման աշխատանքի համար, արտասովոր երկար ժամկէտ»:

ՎԵՐԼՈՒԹԱԿԱՆ

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՓԱԽՉԵԼՈՒ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

ՋԷՑՄՍ ԹԱԿՈՐԵԱՆ

Գաղտնիք չէ Հայաստանում տարածում գտած այն կարծիքը, թե իշխանությունն էլ, ընդդիմությունն էլ մի բան չեն: Այսինքն, իշխանությունն իհարկե վատն է, նոյնիսկ անտանելի, բայց այն ընդդիմությունն էլ, որ այսօր իշխանությունն է, պակաս անտանելի եւ վատը չէ, առաւել եւս, որ մինչեւ 1998 թուականը եղել է կարծես թէ ոչ պակաս վատ իշխանություն, կամ առնուազան ներկայիս վատ իշխանություն սկզբնաղբիւր: Ասել, որ այդ կարծիքն անհիմն է, կը լինի սխալ: Բայց կարծես թէ ակնյայտ է, գրեթէ այնքան, ինչքան որ ակնյայտ է այդ կարծիքի տրամաբանությունն ճշմարտացիությունը, որը այդօրինակ կարծիքը հանրությունում է փակուղի: Այսինքն, երբ հնչում է տեսակէտ, որ թէ ընդդիմությունը, թէ իշխանությունը հաւասարապէս բանի պէտք չեն, բնականաբար հարց է առաջանում, թէ իսկ որն է ելքը, որտեղ է բանի պէտքը, կամ բանն ու պէտքը:

Այդ հարցին պատասխանները երբեմն լինում են տարբեր: Մէկն ասում է, որ բանի պէտքը «երրորդ ուժն է», միւսն ասում է, որ բանի պէտքը պէտք է որոնել դարերի խորքում, քանի որ այնտեղ է մեր հիւանդությունն սկզբնաղբիւրը, երրորդն ասում է, որ ոչ մի բան ու պէտք էլ չկայ եւ հազար տարի ապաքին էլ չարունակուելու է, քանի որ հարցը մենթալիտետն է, որը չի փոխուել, չորրորդը մէկ այլ բան է ասում, եւ այսպէս շարունակ: Այդ ամէնն ամբողջութեամբ ստեղծում են տպաւորություն, որ այն, ինչ այժմ կատարում է Հայաստանում՝ իշխանությունն ու ընդդիմությունն պայքարի տեսքով, ընդամենը ակնուկուրի է, որից Հայաստանի կեանքում ոչինչ չի փոխուել, անկաշունությունից ու ցնցումներից, իսկ ինչպէս Մարտի 1-ն էլ ցոյց տուեց՝ գոհերից ու վերադարձներից բացի:

Ընդդիմությունն եւ իշխանությունն ցանկացած պայքար «ակնուկուրի» է: Այդ առումով, Հայաստանում այդօրինակ մտքի հեղինակներն ամենեւին էլ հեծանիւ չեն յայտնաբերում: Բոլոր երկրներում էլ ընդդիմությունն եւ իշխանությունն իսկ մէկ նպատակը իշխանական լծակներին հասնելն է, թէկուզ եւ այն պարզ պատճառով, որ առանց այդ լծակների անհնար է իրականացնել այն ծրագրերն ու խոստում-

ները, որոնք քաղաքական ուժը տալիս է հասարակությանը: Իհարկէ, կան ուժեր, գուցէ Հայաստանում բոլոր ուժերն են այդպիսին, որ իշխանությունն ձգտում են ոչ թէ ժողովրդին տուած խոստումներն իրականացնելու, այլ սեփական բարեկեցությունը հոգալու, կամ ինչ որ բանի համար ինչ որ մէկից վրէժխնդիր լինելու համար: Հնարաւոր է, նոյնիսկ շատ հնարաւոր է: Աւելին, ռեւանշի այն վարկածը, որ Հայաստանի ներկայիս ընդդիմությունն պարագայում հրապարակ է նետել իշխանական քարոզչությունը, գուցէ մօտ է իրականությունը, կամ զգալի մասով իրականություն է:

Սակայն այդ ամէնի մէջ պարզ եւ տրամաբանական հարց է առաջանում՝ իսկ որն է այլընտրանքը: Ով է այսօր ներկայացնում գործող իշխանությունն ու առկայ ընդդիմությունն գործնական, տեսանելի, շօշափելի, առարկայական այլընտրանք: Միայն այն խօսքը կամ դիրքը, «թէ նրանք երկուսն էլ բանի պէտք չեն, իսկ ելքը ես եմ, կամ իմ մտածածը», դեռեւս չի նշանակում այլընտրանք: Այլընտրանքը մտածողութիւն է, կենսագրութիւն, պատմութիւն, ներկայ, ծրագիր, գաղափար, աշխատանք, պայքար: Կայ արդեօք Հայաստանի քաղաքական դաշտի որեւէ անկիւնում այդպիսի բան: Թերեւս ոչ: Մինչդեռ կեանքն ընթանում է առաջ, իսկ երբ կեանքն ընթանում է առաջ, ապա այդ ընթացքը հասարակության համար ինչ որ առումով օգտակար կարող է դառնալ միայն ու միայն երկրում քաղաքական մրցակցութեան առկայությունն պարագայում: Իսկ այդ մրցակցութիւնն այսօր ապահովում է ներկայիս ընդդիմությունը: Այն գուցէ ունի որակի հետ կապուած բազմաթիւ խնդիրներ, գուցէ ունի դեռեւս պատասխանի ապաստարան միջոցներ, ունի շատ դէմքեր, որոնք ուղղակի չեն տեղաւորում այն գաղափարների ու արժէքների տրամաբանություն մէջ, որոնք դաւանում է նոյն ընդդիմությունն ու որոնց համար պայքարում: Սակայն այդ ընդդիմությունն այլընտրանք այժմ, առայժմ, դեռեւս չկայ, հետեւաբար ողջունելի է անգամ այդ որակի ընդդիմությունն գոյութիւնը, եթէ նոյնիսկ իրաւացի համարենք այն միտքը, թէ ընդդիմությունը որակական ներուժով մեծ հաշուով քիչ է տարբերում իշխանությունից: Անգամ եթէ ընդդիմությունն ու իշխա-

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԱՆՑԱԾ ՄԵԿ ՏԱՐԻՆ

«Տարին լարուած էր եւ յազեցած իրադարձութիւններով. յետընտրական պրոցէսները երկիրը տարան այնպիսի հունով, որ բաւական լուրջ միջադէպեր տեղի ունեցան, եւ երկրում վստահութեան մթնոլորտի, արդարութեան դեֆիցիտի հետ կապուած կային խնդիրներ», - ասաց Հայաստանի հանրապետական կուսակցութեան խօսնակ, Ազգային ժողովի պատգամաւոր էդուարդ Շարմազանովը՝ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոցում գնահատելով 2008 թուականի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւններից անցած մէկ տարին:

«Ես հետու եմ այն մտքից, որ մեր երկրում ամէն ինչ նորմալ է եւ ամէն ինչ յաղթահարուած է, այդ թւում նաեւ վստահութեան դեֆիցիտը, բայց կարծում եմ, որ իշխանութիւններին հնարաւորութիւն է տրուած, եւ իշխանութիւնները կարողանում են իրականացնել այն բարեփոխումները, որ նրանք խօսք են տուել Փետրուարի 19-ից առաջ, եւ նախագահի գլխաւորութեամբ յստակ երեւում է այն լոյսը թունելի ծայրին, որը քայլ առ քայլ Հայաստանը տանում է դէպի աւելի բարեկեցիկ կեանք», - յայտարարեց իշխող կուսակցութեան խօսնակը՝ յաւելելով. - «Պրոբլեմները կան, դեռեւս ամբողջութեամբ յաղթահարուած չեն «Մարտի 1»-ի հետեւանքները, որովհետեւ եւ դատարանութիւնն է գնում, եւ կան բազմաթիւ հարցադրանքներ, բայց յուսով եմ, որ հասարակութիւնը տեսնում է այն քաղաքական կամքը եւ այն անկեղծութիւնը, որը կայ եւ երկրի նախագահի, եւ իշխող կուսակցութեան եւ կոալիցիայի մօտ»:

Երկրի ներքաղաքական կեանքում անցած մէկ տարուայ ձեռքբերումների վերաբերեալ Շարմազանովը ասաց. - «Առաջինը մեր նորագոյն պատմութեան մէջ՝ մենք ականատես եղանք, որ երկրի գլխաւոր քաղաքական ամբիոնից, այն է՝ Ազգային ժողովից, հանրապետութեան նախագահը խօսեց պրոբլեմ-

ների մասին, ոչ թէ առաջին հերթին ձեռքբերումների, այլ այն արատաւոր երեւոյթների մասին, որոնք կան մեր երկրում»:

Իշխանութեան եւ ընդդիմութեան ներկայացուցիչները գնահատում են նախագահական ընտրութիւններից անցած մէկ տարին

«Տարին լարուած էր եւ յազեցած իրադարձութիւններով. յետընտրական պրոցէսները երկիրը տարան այնպիսի հունով, որ բաւական լուրջ միջադէպեր տեղի ունեցան, եւ երկրում վստահութեան մթնոլորտի, արդարութեան դեֆիցիտի հետ կապուած կային խնդիրներ», - ասաց Հայաստանի հանրապետական կուսակցութեան խօսնակ, Ազգային ժողովի պատգամաւոր էդուարդ Շարմազանովը՝ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոցում գնահատելով 2008 թուականի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւններից անցած մէկ տարին:

Հայ Ազգային Կոնգրեսի ներկայացուցիչ Դաւիթ Շահնազարեանը, մինչդեռ, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոցում յայտարարեց, թէ «այն, ինչ տեղի ունեցաւ մէկ տարի առաջ, դա ամէն ինչ էր, բայց ոչ ընտրութիւններ»:

«Ես համարում եմ, որ այս մէկ տարում տեղի ունեցաւ մեր հասարակութեան խոշոր, մեծ առաջընթաց, մենք դարձանք, ըստ էութեան, քաղաքացիական հասարակութիւն. սա ամենամեծ նուաճումն է», - վստահեցրեց ընդդիմադիր գործիչը: - «Երկրորդ՝ իշխանութիւնը ամբողջապէս բացառեց իր էությունը, ցոյց տուեց, որ որեւէ կապ չունի օրէնքի հետ, քաղաքականութեան հետ, եւ ապացուցեց, որ այն գնահատականը, որ տրուել էր, որ սա աւագակապետութիւն է, ուղղակի դա հաստատում է»:

Շահնազարեանի համոզմամբ՝ «այս մէկ տարուայ ընթացքում դրուեց այն հիմքը, որով Հայաստանը շարժուելու է դէպի ժողովրդավարութիւն, դէպի այսպէս կոչուած եւրոպական արժէքներ». - «Դա անշուշտի պրոցէս էր, որը անցած մէկ տարում տեղի ունեցաւ»:

այն է, որ բանը առկայ է, իսկ այդ բանը վերջին տասնամեակի թերեւս միակ իրական հասարակական-քաղաքական գործընթացն է, որ սկսել է 2007 թուականից, ստիպելով բոլորին բացուել կամայ, թէ ակամայ:



**A.B.A. INSURANCE SERVICES**

Life, Health  
Group Health  
Disability  
Long Term Care

Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California

**33<sup>th</sup> ANNIVERSARY**

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՐԱԺԵՇՏ Է**

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ**

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI- TAD"



ԸՆԴԱՔԱԿԱՆ

ՕՊԱՍԱ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ

1990 թուականին երբ Խորհրդային Միությունը պատմութեան անցաւ, Ամերիկա եւ Գերմանիա Ռուսաստանին խոստացան որ, օգտուելով իր տկարութենէն, «ՆԱԹՕ»-ի սահմանները ընդարձակման պիտի չենթարկէին, երբ կը փորձէին Արեւմտեան եւ Արեւելեան Գերմանիաները իրարու միացնել:

1997 թուականին, ժխտելով այս խոստումը, Արեւմուտքը ծրագրեց «ՆԱԹՕ»-ն տարածել դէպի Ռուսաստանի մօտակայ երկիրները, եւ այս ծրագրով, Ռուսաստանը ինքզինք խաբուած զգաց: Այլ խօսքով, ռուսերը Արեւմուտքի խոստումներու նկատմամբ, իրենց հաւատքը կորսնցուցին: Աւելին, Քրեմլինի համար, սոյն ընդարձակման ծրագիրը Արեւմուտքը ուզեց կապել, իբրեւ թէ, ժողովրդավարութեան-տեմոքրատի, Խորհրդային նախկին երկիրներէն ներս հաստատման գործընթացին:

Հարցը հոն էր որ «ՆԱԹՕ» միացող նախկին կոմունիստական 3 երկիրներու պարագային – Լեւաստան, Հունգարիա եւ Չեխոսլովակիա, տեմոքրատի պարտադրութիւն տեղի չունեցաւ: Ռուսերը արդարօրէն սկսան մտածելու որ եթէ ամերիկացիները իրապէս կը հաւատային որ «ՆԱԹՕ»-ի մասնակցութիւնը լաւագոյն միջոցն էր ազատ ընտրութիւններ, եւ կամ մարդկային իրաւունքներ պաշտպանելու համար, հապա ինչո՞ւ իրաւունք չէր տրուեր նախկին ամենամեծ համայնավար երկիր, Ռուսաստանին մասնակցելու «ՆԱԹՕ»-ին: Ընդհակառակը, Մոսկուային պիտի ըսուէր որ ինք պիտի չկարենայ մաս կազմել:

«ՆԱԹՕ» գինուորական կազմակերպութեան, Ամերիկայի կողմէ ղեկավարուող, ընդարձակումը ռուսերուն տուաւ ուրիշ դաս մը եւս: Օգտուելով իր տկարութենէն, ամերիկացիները յառաջ տարին իրենց ծրագիրները: Իսկ ռուսերը, որպէսզի խօսք ունենան Եւրոպայի գործերուն խառնուելու, պէտք է զօրաւոր ըլլային գինուորական գետնի վրայ: Ինչ որ ցոյց տուին անցնող ամսուայ ընթացքին, Վրաստանի մէջ տեղի ունեցած հինգօրեայ կարճ, եւ սակայն, քանդիչ պատերազմով: Այս պատերազմը նաեւ տեղի ունեցաւ Վրաստանի եւ Ուքրանիոյ ՆԱԹՕ մասնակցութեան հրաւերի լոյսին տակ, հրաւեր որ զօրաւոր կերպով յառաջ կը մղուէր ամերիկացիներու կողմէ: Իսկ Վրաստանի անխոհեմ նախագահը, Միխայիլ Սահակաշվիլի, ենթադրելով որ Ռուսաստան լուռ պիտի անցնի Հարաւային Օսեթիայի վրայ իր կատարած յարձակումին նկատմամբ, ենթարկուեցաւ Ռուսաստանի զօրաւոր միջամտութեան, ահաւոր վնասներու հասցնելով ոչ միայն իր երկիրը, այլ ամբողջ Անդրկովկասի շրջանը, նոյնպէս առիթ տալով որ Թուրքիա հրապարակ իջնէ այդ շրջանի անվտանգութեան պաշտպան հանդիսանալու պատրուակով:

ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ Այս բոլորին լոյսին տակ, Արեւմուտքը ներկայիս, ինչպէ՞ս պէտք է վարուի Ռուսաստանի հետ: Պէտք է խոստովանիլ որ գոյութիւն

չունին լաւ ընտրութիւններ գործելու համար: Ամերիկայի որոշ մտածողներ այն կարծիքին են որ, նոյնիսկ վրացի-ռուս այս ընդհարումէն ետք, տակաւին կը պնդեն Վրաստանի մասնակցութեան ՆԱԹՕ-էն ներս: Չեն անդրադառնար, կամ գիտակցօրէն կ'ուզեն մոռնալ որ «ՆԱԹՕ»-ն փոխադարձ պաշտպանութեան պայմանագրութիւն մը կը հանդիսանայ, եւ եթէ Վրաստան մաս կազմէ այս գինուորական ուխտին, Ամերիկա ստիպուած պիտի ըլլայ իրեն օգնութեան հասնելու, նոր պատերազմի մը պարագային: Այս օգնութիւնը պիտի նշանակէ գինուորական միջամտութիւն մը ուղղակի Ռուսաստանի սահմաններու մօտ: Կասկած չի կրնար գոյութիւն ունենալ որ ռուսերն ալ պիտի միջամտեն գինուորական գետնի վրայ, նոյնիսկ հիւլակական գէնքերու գործածութեան հաւանականութեամբ: Նման սենարիօ մը լուրջ վտանգ կ'ենթադրէ համաշխարհային խաղաղութեան, մանաւանդ երբ նաեւ նկատի առնուի որ Ամերիկան արդէն իսկ միտքուած է Աֆղանիստանի մէջ, որ սխալ կամ շիտակ, Ամերիկայի Վիեթնամը կը նկատուի:

Ի՞՞՞՞՞՞՞ ԿՐՆԱՅ ԸՆԵՆ ԵՄԱՍԱՆ

Ռուս-Վրացի ընդհարումը տեղի ունեցաւ ձօրձ Պուշի տիրահաշակ իշխանութեան օրով: Ներկայիս Ամերիկայէն ներս հաստատուած է նոր իշխանութիւն, Պարաք Օպամայի նախագահութեամբ, իշխանութիւն՝ որ կը զգուշանայ առճակատումի քաղաքականութենէն, եւ կ'ուզէ հարցերուն մօտենալ դիւանագիտութեամբ եւ երկխօսութեամբ, պատերազմական միջամտութիւնը թողնելով ամենավերջին ընտրութեան: Այս նկատումով, եւ աչքի առջեւ ունենալով Վրաստանի բիրտ միջամտութիւնը Ռուսաստանի կողմէ, Ամերիկայի հրաւերը Վրաստանի եւ Ուքրանիայի «ՆԱԹՕ»-ի մասնակցելու գէթ առ այժմ մէկ կողմ դրուի: Անկախ ասկէ, Ուաշինկթընը կրնայ վտազել առաւել եւս Ռուսաստանի հետ իր կապերը: Թելադրելի պիտի ըլլայ որ Արեւմուտքը, յատկապէս Ամերիկան, նորոգէ իր ապահովութեան գործակցութիւնը Ռուսաստանի հետ: Այս գործակցութիւնը կրնայ ունենալ ուղղակի Ռուսաստանի «ՆԱԹՕ»-ի մէջ մուտքի ձեւ մը, որ բոլորովին նոր առանցքի ձեւ կրնայ առնել: Ի հարկէ այս տեսակ մը անկարելիութիւն նկատուի, սակայն ներկայի «ՆԱԹՕ»-ն 20 տարի առաջուայ կազմակերպութիւնը չէ, եւ Ռուսաստանի մասնակցութեան հրաւեր մը Օպամայի փոփոխութեան ծրագրին մէջ կրնայ մտնել:

Հարցը հոն է որ, այսօրուայ Ռուսաստանը, մանաւանդ Խ. Միութեան փլուզումէն յառաջ եկած տկար Ռուսաստանը չէ: Փութիւնեան եւ Մետվետեան իշխանութիւնները բաւականին ժողովրդականութիւն կը վայելեն, իրենց ունեցած պետական եւ տնտեսական նոր տուեալներով: Հոգեբանական գետնի վրայ ալ, ինչպէս պարագան լոյսին տակ, Ռուսաստանը պատրաստ չի թուիր որեւէ ոտնձգութեան իր մեծ երկիր մը ըլլալու ինքնագոհութեան դէմ հարուած



Միւս կողմէ, կառավարական քննիչ յանձնախումբը կը շարունակէ իր աշխատանքները եւ Յուլիսի վերջաւորութեան կը ներկայացնէ քանի մը տեղեկագիրներ: Անոնցմէ մէկուն մէջ, ստորագրուած Ֆայիք պէյի եւ Յ. Մոստիշեանի կողմէ, հրամանագրերու, փաստաթուղթերու եւ հեռագիրներու վրայ յենած կ'ապացուցուի Ատանայի նահանգապետ ձեւատ պէյի, ձեպէլ Պէրէքէթի գաւառապետ Ասաֆի եւ շարք մը այլ պետական պաշտօնատարներու մեղաւորութիւնը Զարդերուն: Վերջիններս կը մեղադրուին Զարդեր հրահրելու, էրզինի եւ Փայասի բանտերէն քրեական յանցագործները ազատ արձակելու, ամբողջ գինուոր, տարբեր գաւառապետներուն գրգռիչ հեռագիրներ յղելու, Զարդերուն ժամանակ վճռական միջոցներու չդիմելու եւ այլ ծանրակշիռ յանցանքներով: Տեղեկագիրը կը հաստատէ որ Ատանայի նահանգին մէջ սպանուած 5683 անձերէն 4196-ը քրիստոնեայ են, իսկ սպաննուածներու ընդհանուր թիւը կը ընդհանրուի 15,000-ի. տեղեկագիրը նաեւ հրկիզուած կառույցներուն ընդհանուր թիւը կը գնահատէ 4823, որոնցմէ 386-ն կը պատկանի իսլամներու, իսկ մնացեալը՝ քրիստոնեաներու: Ատանայի Զարդին իշխանութիւններուն յանցաւոր գործակցութեան բացայայտման գործին մէջ մեծ դեր կը խաղայ Յակոբ Պապիկեանի տեղեկագիրը: Վեր-

ջինս Ատանայէն վերադառնալով Կ. Պոլիս, «Իթթիհատ» եւ «Թաւիւրի էֆթիար» թերթերուն տուած իր հարցազրոյցներուն մէջ յստակօրէն կ'ամբաստանէ տեղական իշխանութիւնները: Ապա, երեսփոխանական ժողովի Յուլիս 26-ի նիստին կը պնդէ որ Ատանայի նահանգին մէջ սպաննուածներու թիւը 21,000 է: Ժողովը կ'որոշէ յաջորդ նիստին ընթերցել անոր տեղեկագիրը: Սակայն, մինչեւ յաջորդ նիստը, Յ. Պապիկեան Սան Սթեֆանոյի իր բնակարանին մէջ, խորհրդաւոր պայմաններու տակ կը մահանայ: Այդպէս ալ, անոր պատրաստած տեղեկագիրը երեսփոխանական ժողովին մէջ չընթերցուի: Կարճ ժամանակ անց, Մեծն Մուրատ, Յ. Պապիկեանի սեփական թուղթերուն մէջէն կը յայտնաբերէ անոր պատրաստած տեղեկագիրը: Մի քանի օր անց, խումբ մը ազգային գործիչներու հետ, գաղտնի պայմաններու տակ կը լուսանկարեն գայն: Տեղեկագիրը, գրքոյկի ձեւով, ֆրանսերէն լեզուով լոյս կը տեսնէ 1912-ին, իսկ հայերէն լեզուով՝ 1919-ին: Յ. Պապիկեան իր տեղեկագիրին մէջ կը գրէ. «Բոլոր այս մանրամասնութիւնները վճռականօրէն կ'ապացուցեն իրողութիւն մը, այսինքն այն թէ՛ Ատանայի մէջ կառավարական պաշտօնեաները եւ անոնց արբանեակները կանխահոգ կարգադրութեամբ պատրաստած են այնպիսի պարագաներ, որ իրենց մտածումով՝ իրենց վրայ ինկած պատասխանատուութիւնը պիտի կարենային նուազեցնել այդ Զարդերուն մէջ՝ գոր իրենք իսկ ծրագրեցին եւ որոշեցին, գէթ պաշտօնապէս, այդ պատասխանատուութիւնը նետել հայերուն վրայ» (34): Յ. Պապիկեան կ'ընդունի որ հայերը դիմած են գէնքի. Բայց այդ եղած է միայն ինքնապաշտպանու-

## ՊԱՌԱԻ ԳԴԱԼՆԵՐԸ (ԻՐԱԿԱՆ)

### ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

1948 թ. հորաքրոջ տղան եկաւ մեզ մօտ ու ինձ ասաց մի լաւ աշխատանքի տեղ կայ: Նրանք մեծ առեւտրական ու հայ մարդիք, երկու քոչը ու եղբայր եւ մի պառաւ տատիկ:

Թեթեւ տան ծառայութիւն է եւ լաւ վարձ: Ամսական 30 ռիալ ու փոր պահել: Կարեւորն այն է որ հայ ընտանիք են:

Ծնողերիս հետ խորհրդակցելով միւս օրը գնացինք պառաւի տուն, որն գտնուում էր Ֆերդովսի պողոտայում, մի նեղլիկ փողոցի առաջին դուռը:

Ծեծեցինք դուռը, դրան ետեւից պատասխանեց պառաւը: - Ո՞վ է: Ես եմ Շմաւոնը, ձեզ համար ծառայ եմ բերել: Կացիր գալիս եմ, ասում է պառաւը, յանկարծ փայտէ կողպէքով դուռը բացուեց չընկալն:

Շահաբասեան ծանր փայտ է դուռը, երկփեղկանի, դրսից շարուած էր կլոր ու փայլուն երկաթէ մեծ գլխիկներով մեխեր ու թակիչ, որը նմանում էր ախոյեանի բռունցքի: Հրաւիրուեցինք ներս, ծանօթացանք:

Շմաւոնը ասաց թէ լաւ տղայ է ձեռքը մաքուր: Տեսնե՞ք, - շանը գրկած ասաց պառաւը: Անյապաղ թողեց ինձ այդտեղ ու հրաժեշտ տուեց Շմաւոնը:

Ահա այստեղ էր մեծապատիւ առեւտրականի ապարանքը:

- Ասա տեսնեմ տղուլ, անունդ ի՞նչ է, հարցնում է պառաւը: - Ստեփան: Հա հա մենք էլ ենք ասում Ստեփան, ծոր էր տալիս պառաւը: Ինչ լաւ հայկական անուն է: Որտեղացի ես, հայ ու մայր ունես: Այո ունեմ բուրբուրացի եմ, ասում եմ ես: Ծառայել ես: - Այո ծառայել եմ: - Դէ լաւ ծանօթ ունե՞ս քեզ երաշխաւորի:

Պառաւի որոշ բարեբեր չէի հասկանում, ընկալում ու մնում եմ շուար ինչ պիտի պատասխանեմ: Կարկամելով ասում եմ, այո այո ու զգաստ կանգնում եմ իր առջեւ: Ակնոցի տակից ու քմծիծաղելով պառաւն ասաց, խօսքիս պատասխանի չտուեցիր: Նորից ասում եմ այո, այո:

Պառաւն իմացաւ հայերէն լեզուի բառապաշար չուներ: Պառաւն ու թոսուն տարեկան էր եւ լաւ կազդուրուած: Եւ ինձ ընդունեց որպէս ծառայ:

Առաջին օրն էր, ուրախ էի, որ մի հայ տնում եմ ծառայում: Պառաւի աղջիկ ու տղան քառասունի մօտ էր տարիները, բարձրահասակ եւ լաւ ժեստով կեցուածք ունէին, չէին ամուսնացել, ապրում էին մօր մօտ բակում, եւ մի ուրիշ շէնքում, բակի Արեւմուտքում:

Իսկ պառաւի սենեակները Արեւելքում, կահաւորած էին հին գոյքերով եւ կարպետներով: Նրանց յատակը շարուած խէծաթէ թրծուած աղիւտով, իսկ առաստաղը փայտածածկ էր սեւ ու մրոտ: Բակում կային հարիւր տարուայ եղեւնիներ:

Պառաւը ինձ ծանօթացնում է առօրեայ գործածուող գոյք ու ամանեղէնների հետ: Քառասուն աստիճանաւոր մուտք ջրամբարին, եւ ինձ յորդորում էր ամէն օր լուսաբացին քնից վեր կենամ ու գործի ացնեմ, մինչեւ գիշերուայ ժամի տասն երկուսին: Կրկին խոնարհաբար ասում եմ շատ լաւ եւ այո...

Այդ բոլոր յորդորանքից յետոյ ինձ բերում է եւ իմ ձեռքը տալիս է մի ջարդուած ցախաւել ու կանգնում գլխիս վերեւ:

Աւելի-աւելի տեսնեմ կարող ես թէ ոչ: Ասում եմ տատիկ որ մի կողմ աւլեմ:

- Դէ լաւ կողմերն էլ գիտես: Այդ խօսքից վիրաւորում եմ, դէ լաւ կողմերն էլ գիտես, եւ ուրիշ արտայայտութիւններ:

Իր ձեռով աւելում եմ խէծաթով շարուած բակը, նրանց արանքում կային հագար տեսակ միջատներ, կեղտ ու գարշելի հոտ:

Պիտի մատներով հանէի որոշ պնդացած թուճակներ աղբերը: Ինձ ասում էր կը սովորես վնաս չունի, քանի օր կը մնաս մեզ մօտ քեզ մարդ կը սարքեմ:

Չգայուն էի, ինքս ինձ ասում եմ, միթէ՞ մարդ չեմ, ու աչքիս տակից նայում եմ պառաւի վարք ու բարքին եւ ապաշնորհ բնաւորութեանը:

Բակն աւելուց յետոյ ինձ տանում է քառասուն աստիճանաւոր ջրամբարը ցոյց տալու, ձեռքին բռնած ձիթեճրագը, ու ինձ պատուիրում է ամանեղէնները կը բերես, կը լուանաս, բայց զգոյշ չզգես փոսիկը, որը շատ բաներ է կուլ տուել:

Այդտեղից վերադառնում ենք ու հասնում մի փոքր միջանցք, որ սենեակների նախամուտն էր, այդտեղ դրուած էր մի հին բազկաթոռ, որի ներսի դարմանները թափած էին շուրջը: Նրա վրայ ելումուտ էին անում քանի տեսակ միջատներ: Յանկարծ տեսանք պառաւի փոքրիկ շուկը եկաւ պակեց այդ անթիքա բազկաթոռին: Անմիջապէս պառաւը շանը գրկեց ու շոյեց իր փափկամազիկին ու ասաց. - Յիմար այստեղ քո տեղը չէ, տես միջատներին, նրանք քեզ կը կծեն ու շանը գրկեց ու փայտալեզ:

Նրանից յետոյ ինձ ցոյց է տալիս սենեակների մաքրութեան ձեւը: Ես տաս տարեկան երեխայ էի, իմ ուժից վեր էր, բայց խորհում եմ ես եթէ չկատարեմ պարտականութիւնս, ինչ պիտի պատասխան տամ իմ ձեռքին սպասող ծնողներին, որ սպասում են ամսական երեսուն ռիալին որ պիտի յոգան առօրեայ ծախսերը:

Առաջին օրն էր, եւ առաջին գիշեր, յոգնել էի պառաւի մրթմրթացող բնաւորութիւնից: Տաս տարեկան երեխային այդ օրը շան նման քարշ էր տուել, մինչեւ գիշերուայ ժամի տասներկուսին:

Յոգնել էի թուլացել, քնի կարօտ ունէի: Պառաւը շանն առել էր գիրկը ու խօսում էր շան հետ իր երեխի պէս, այդ միջոցին քնից ակամայ պառկում եմ անթիքա բազկաթոռի մօտ խէծաթէ քարփիջների վրայ: Մէկէն պառաւը կողքս խոթեց դէ վերկաց գնա տեղդ պառկիր, հենց այս մեր պայանական աթոռի վրայ:

Իր կողքին գցած էր հագար գոյնի կարկտանով շոր, որի վրայից գարշահոտ էր գալիս, իբրեւ ծածկոց:

Գիշերը քունս չի տանում թէ ցրտից թէ գարշահոտից, նաեւ միջատների եւ ու մուտքից մնում եմ անձար:

Այդ միջոցին գալիս եմ այն եզրակացութեան որ հարիւր տարուայ բազկաթոռին պիտի պառկել, որի պառաւը իր շանը կշտամբում էր, ու ասում: Յիմար տեսնում ես

միջատներին, նրանք քեզ կը կծեն: Հենց այդ աթոռին որ իր շանը կը կծէին:

Բայց իր հայ ու դժբախտ գեղջուկի համար փափուկ անկողին էր: Հիմա ես այս հասուն տարիքում հասկանում եմ ինչու են մարդիկ միմեանց հակադրում, ինչու են յարձակում իրար դէմ, եւ ովքեր են քէն ու ոխ տարածում ազնիւ մարդկանց ոգում, պղծում են մարդկային սրբութիւնը: Այդ հարցում անմեղ չեն հարուստ շնասէրներն, կապիտալները, որովհետեւ չեն ճաշակել ազնիւ հասարակութեան կեանքի դառնութիւնը: Նրանք չեն զգացել գեղջուկի անկեղծ ու արդար ոգին, որը փնտրում է իր քրտինքի վաստակած հացով ապրել:

Առաւօտեան ցրտաթաթախ ու անքուն տեղից դուրս եմ գալիս շարունակում եմ պատուիրած գործերս: Չեմ յիշում երկու թէ երեք օր գործեցի պառաւի տանը: Յիշում եմ վերջին օրը ճաշից առաջ ամանաձամաները, գոյալ պատուաքաղները տարայ քառասուն աստիճանաւոր ջրամբարը լուացի առանց մի լոյսի, կուսի տակ կար փոսիկ որը ջուրը կուլ էր տալիս լայն խողովակի միջոցով:

Փորձելու համար ոտքս սեղմեցի նրա մէջ ու վախից անմիջապէս դուրս հանեցի, ինձ թուաց թէ երեխայ էլ ընկնէր, կուլ կը գնար:

Փորձելուց յետոյ, սկսեցի մուտք տեղում ամանները լուանալ, ու շարեցի իրար մէջ, գոյալ պատուաքաղները ձեռքս բռնեցի, ծանր ճենապակեայ էին Ռուսական պնակները, գրկել եմ ու պիտի քառասուն աստիճան բարձրանամ վերեւ: Ծարունակեցի բարձրանալ:

Հաշուեցի մէկ-երկու, մինչեւ 35-երորդ աստիճան, յանկարծ մէկէն գոյալ պատուաքաղները դուրս թռան ձեռքիցս եւ զընզընգոցով հասան փոսիկը, որը երկուսը կուլ էր գնացել լայն խողովակի միջոցով:

Վերջին աստիճանին վայր դրեցի պնակները, ու սրբնթաց հաւաքեցի թափուած գոյալները, եւ ոտք ու ձեռքով էլ փոսիկի միջից հանեցի երկու գոյալ, հաշուեցի տեսայ չկայ երկու գոյալը: Պառաւն եկաւ եւ ուզում էր հաշուել աման-չաման գոյալները: Հարցնում է ինչու ուշացար տղուլ: Ես չեմ խօսում ու հաշուում է գոյալները: Չկային երկու գոյալները: Հարցնում է ինձանից գոյալների պակասը: Վախից ասում եմ չգիտեմ: Ակնոցի տակով նայում է ու ինձ կասկածում:

Յանկարծ ձայնն առաւ գլուխն բղաւեց վրաս-չգիտեմ, չգիտեմ որն է, մէկ ձեռքը կանթել էր մէջքին,

միւս ձեռքի ցուցամատը պարզել էր իմ կողմը, երկու գոյալի ցաւից գառանցում էր գոռում: Կարծես թուքը մնացել էր կոկորդը: Մի պահ յետոյ սկսեց, անհեթեթ ու կեղտոտ բերանով պոռալ:

- Լակոտ ասեմ ինչու ուշացար, մի բան կայ քո մէջ, ասա տեսնեմ, հէրդ կը հանեմ, ծնունդդ կ'անիծեմ, շուն շանորդի: Մէկէն երեսը թեքեց ու գնաց դէպի փողոց, ու ինձ սպառնաց, հենց այստեղ, հենց այս պահին, գոյալների գողին կը գտնի մեր հարեւանը գողութեան համար հայելի է նայում, ձեռքի մէջ է նայում:

Ես ինչ գիտէի այդ կախարդ խօսքերից: Գոյալները անցել էին ջրանցքը: Ես էլ ոչ մի էլք չէի գտնում եթէ ասէի եղածը, քանի ամիս ու տարի պիտի գործէի որ վճարէի նրանց արժէքը:

Ինքս իմ մէջ որոշեցի այդտեղից գնալ, հեռանալ:

Գաղտագողի մօտեցայ փողոցի դրան, ծպտուեցի տեսայ խօսում էր մի ուրիշ կնոջ հետ: Դրսում սպասում էր ինձ վախեցնելու համար, որ վախենամ ու խոստովանեմ որ երկու գոյալները ես եմ գողացել:

Կրկին նայեցի մէկ աջ եւ մէկ ձախ կողմ: Մի գոյգ քաթանի կօշիկ ունէի մէկի ծալքն էր ծակ, միւսը տակ չուներ: Ձեռքս առայ ու դուրս ծլկեցի աջ, Ֆերդովսի պողոտան, Նադերի, Սաադի, Հեղաեթ մի շնչով մօտ չորս քիլոմէթր վազեցի ու վախից ընկայ Մարտիրոս քեռոնց բակը եւ յուշաթափուեցի:

Ինչքան էր անցել չգիտեմ, մէկէն իմացայ ծերուկ Մարտիրոս քեռին ասում է որդի էս ջրից խմի քէֆը տեղը կը գայ, մաժում էր ուսերս ու ջուր էր ցնցում երեսիս, չգիտեմ ինչքան անցաւ տրամադրուեցի: Մարտիրոս քեռին լինում էր մօրս ազգականներից: Մարտիրոս քեռին փորձուած մարդ էր, հասկացաւ որ ես նեղութեան մէջ եմ ապրում:

Ձեռքս բռնեց տարաւ սենեակ: Մտքերիս մէջ տատանում էի, նրա համար որ մեղք չեմ գործել, երկու գոյալն ինչ արժէ որ մի տաս տարեկան երեխի հոգեկանը վիրաւորուի ու այսպէս տանջուի:

Ուզում եմ գոռալ, եւ պատիւ պահանջել, ինձ մեղադրողներին: Բայց չգիտեմ ինչպէս եւ ինչով: Երեխայ եմ դեռ:

Այդ մեծապատիւ Մարտիրոս քեռուց խորին շնորհակալութիւն եմ յայտնում եւ դուրս գալիս, հասնում եմ հօրս տունը, նստում եմ մօրս գործած կարպետի վրայ, ուտում եմ քրտինքով բերած հացը, ու մտնում անկողին, եւ քնում եմ մուշ-մուշ:

## ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ

26 տարեկան երիտասարդուհի մը կը տառապի սրտա-երակային լուրջ հիւանդութեամբ: Սրտի երակներու փակմանը «valve» յատկապէս «միթրալ» փականի անբաւարարութիւնը լուրջ հիւանդութիւն պատճառած է: Նաեւ ենթական ունի ուղեղային երակներու անբաւարարութիւն:

Հիւանդը ենթարկուած է գործողութեան եւ կը կարօտի նիւթական օգնութեան:

Նիւթական ձեր օժանդակութիւնը մեծապէս պիտի նպաստէ հիւանդի դարմանումին:

Ձեր նուիրատուութիւնները հաճեցէք ուղարկել՝  
Converse Bank corporation  
AMERICAN EXPRESS BANK LTD, NEW YORK, USA  
SWIFT: AEIB US 33  
for credit Acc./737783  
CONVERSE BANK CORP, YEREVAN, RA,  
SWIFT: COVBAM22  
In favour of LUSINE MOISYAN  
a/c No or Doc. No 1930002305840101



### ՀԱԴՐՈՒԹԻՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵԼ Է ԹԱՊՈՒԼ ՅԱԿՈՒԲԱՆԻ «ԿԱՆԱԶ ՈՒ ՍԵՒ» ԳԻՐՔԸ

«Արմենիան ուրիշները» շաբաթաթերթի լրագրող եւ կովկասյան հակամարտությունների հարցերով փորձագետ Թաթուլ Հակոբյանի »Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր« գիրքը փետրվարի 13-ին ներկայացվել է Լեռնային Ղարաբաղի Հաղորդակցության Գիրքը լույս է տեսել վեց ամիս առաջ եւ շնորհանդեպա՝ վաճառքի ձեռով ներկայացվել Ստեփանակերտում, Երեւանում, Բեյրութում, Այնճարում եւ Հալեպում:

Հաղորդում շնորհանդեպա՝ վաճառքի օրը պատահական չէր ընտրվել: Ինչպես ներկաներին ասել է հեղինակ Թաթուլ Հակոբյանը՝ 1988-ի փետրվարյան այս օրերին էր, երբ տեղի ունեցավ դարաբաղյան պայքարի առաջին հանրահավաքը: Փետրվարի 12-ին Հաղորդում սկսված բողոքի գործողությունը վերածվեց մոտ 1000 հոգանոց հանրահավաքի՝ աներեւակայելի բան ընդամենը 2,500 բնակիչ ունեցող քաղաքի համար, իսկ հաջորդ օրերին արդեն հանրահավաքներ տեղի ունեցան Ստեփանակերտում, ապա Երեւանում, Սփյուռքի տարբեր գաղթօջախներում:

Միջոցառման մասնակիցներին, որոնց թվում էին նաեւ դարաբաղյան շարժման առաջին ցույցի կազմակերպիչներից Գագիկ Ավանեսյանը, Նելլի Կասպարովան, ինչպես նաեւ Հաղորդի շրջանի վարչակազմի ներկայացուցիչներ, շաբաթյին գրասենյակներ, Թաթուլ Հակոբյանը հիշեցրել է նաեւ, որ փետրվարի 16-ին կլրանար 33 տարեկանում սպանված Արթուր Մկրտչյանի ծննդյան 50-ամյակը:

Դիմելով միոցառման մասնակիցներին՝ Հակոբյանը ասել է. »Իմ

գրքի վերնագիրը, որի մտահղացումը տվել է կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանը, ձեռք շատ ծանոթ պետք է լինի: Պատերազմի տարիներին Ղարաբաղում երկու գույն էր ավելանում՝ սեւ եւ կանաչ՝ խակի: Տղամարդիկ խակի էին հագնում, կանաչ կամուֆլյաժ, իսկ կանաչք գնալով ավելի ու ավելի շատ սեւ էին հագնում: Այսպիսով՝ սեւը պատերազմում սպանվող տղաների մայրերի հագուստի գույնն է, կանաչը՝ զինվորական համազգեստը: Պատերազմի տարիներին ամեն օր Ղարաբաղում ավելանում էր երկու գույն, մայրերն ավելի շատ սեւ էին հագնում, որդիները՝ ավելի շատ կրում զինվորական համազգեստ»:

Հաղորդի շնորհանդեպի ընթացքում վաճառվել է »Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր«-ի 37 օրինակ, ինչը ցույց է տալիս Լեռնային Ղարաբաղում, եւ հատկապես Հաղորդում գրքի հանդեպ մեծ հետաքրքրությունը:

Թաթուլ Հակոբյանը ասել է, որ շատ ուրախ կլինեմ, եթե գիրքը կարդացողները արձագանքեն, ներկայացնեն իրենց դիտարկումները, մատնանշեն փաստական սխալները, եթե կան այդպիսիք:

Թաթուլ Հակոբյանի »Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր« աշխատությունը, որի վրա հեղինակը աշխատել է վեց տարի, լույս է տեսել Թեհրանում 1000 օրինակով եւ գերազանցապես վաճառվել Լիբանանում, Սիրիայում, Իրանում եւ Լեռնային Ղարաբաղում:

Առաջիկա հունիսին սպասվում է »Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր« գրքի երկրորդ տպագրությունը:

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax : -----

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**  
**ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**  
**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ**  
 CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ  
 (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆՆԹԱ)  
 GLOABCAST SATELLITE  
 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԱՆ 10:00-11:00

**ՔԱԶ ՆԱԶԱՐ**  
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
 Ամեն Կիրակի երեկոյեան  
 Ժամը 10:00-ից 12:30  
 Կլեմտէյի 280-րդ կայանից

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

Մեծ Ժողովրդականութիւն Վայելող  
 Կլեմտէյի AMGA 280-րդ Ալիքը  
 Այժմ Կը Սփռուի  
**GlobeCast**  
 Արբանեակային Հեռատեսիլով  
 Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի  
 Ամբողջ Տարածքին

Դուք Կրնաք Դիտել  
 Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ  
 Երաժշտական Հաղորդումներ - Եւայլն

Մանրամասնութիւններու Համար  
 Հեռաձայնել 818.547.9696

Չեր Ծանուցումները Վստահեցէք  
 «Մասիս» Շաբաթաթերթին  
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
 massis2@earthlink.net  
 www.massisweekly.com



## WE LOVE OLD BALD GUYS.

Bring your used tires to our FREE Tire Recycling Event.

February 21, 2009  
Saturday  
9:00 a.m. - 3:00 p.m.

Receive a coupon good for 15% off your next purchase of Firestone or Bridgestone tires. Help the environment and recycle your tires!



Restrictions: Open to L.A. County residents. No tires from businesses, no oversized or tractor tires. Rims accepted. If you transport more than 9 tires per trip, please obtain a tire transport form a week ahead at (929) 430-5540, Department of Health Services.

Recycling tires is easy. It's free. It's good for L.A. County!  
www.888CleanLA.com 1(888)CLEAN LA

Funded by a grant from the California Integrated Waste Management Board.  
Zero Waste - You make it happen!



### ՅԵՏԱՇՐՋԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԸ

Շարունակուած էջ 15-էն

Թեան նպատակով: Ապա, անդրադառնալով ջարդերէն յետոյ տեղի ունեցած անարդար ձեռքարկութիւններուն եւ դատավարութիւններուն, ան կ'եզրակացնէ. «Այս տարօրինակ ընթացքը արդիւնքը ունեցաւ չգիտցողներուն ալ սորվեցնելու որ՝ կոտորածն երու հեղինակը եւ կազմակերպիչը նոյնինքն տեղական կառավարութիւնն էր» (35): Յ. Պապիկեան կը գտնէ որ Կիլիկիոյ մէջ ջարդուած է աւելի քան 21000 քրիստոնեայ, որուն մէջ 19479 հայ:

Պաշտօնական տեղեկագիրներէն անկախ, կարգ մը այլ քննութիւններ եւս կը հաստատեն իշխանութիւններուն մեղադրութիւնը կատարուած ջարդերուն: Օրինակի համար Խարբերդի մէջ կազմուած միջկուսակցական մարմին մը, որուն մաս կը կազմէին Իթիհատի, Հ.Յ.Դ.-ի, Մ.Դ.-Հ.Կ. եւ քրտական Տէւիւն Դեմոկրատ կուսակցութիւնն երու ներկայացուցիչները, ջարդերուն հիմնական պատասխանատուն յետաշրջական ուժերը նկատելու կողքին, կը նշէ նաեւ գաւառապետին եւ պետական այլ մարմիններուն անվճռականութիւնը (36):

Մէկ խօսքով, Ատանայի ջարդի ծայրերուն բացառապէս, հայութեան մօտ յառաջ կը բերէ այն համոզումը, որ տիրող կուսակցութիւնը՝ Իթիհատ, այս կամ այն չափով մեղակից է այդ աղէտին: Իսկ զինուորական դատարանին կողմէ առնուած անարդար վճիռները, հայութեան հասցուած ֆիզիքական հարուածին վրայ կ'աւելցնեն բարոյական հարուած մըն ալ:

#### ԻԹԹԻՅԱՏԻ ԴԵՐԻՆ ՍԵՂԱՍՄԱՆ ՓՈՐՁԵՐ

Ատանայի ջարդէն կարճ ժամանակ մը անց, երբ տակաւին հայ հասարակական կարծիքը կը քննարկէր ջարդերուն մէջ Իթիհատի ղեկավարութեան մեղսակցութեան շահին ու կշիռը, 1909 Սեպտեմբերի սկիզբէն պաշտօնապէս կը յայտարարուի Հ.Յ.Դ.-Իթիհատ համագործակցութեան համաձայնագիրը: Հ.Յ.Դ. Կ. Պոլսոյ պաշտօնաթերթ «Ազատամարտ» այդ կը գտնէ «ուրախառիթ» (37): Նոյն կուսակցութեան էրզրումի պաշտօնաթերթ «Յառաջ»-ը այդ մասին կը գրէ. «Երեւոյթն աճիւն միութարական է, ձեռնարկը այնքան օգտակար, որ մենք ցնծագին պիտի շնորհաւորենք, կանչելով՝ կեցցէ՛

օսմանեան ազգերու եղբայրութիւնը,- կեցցէ՛ կուսակցութիւնները» (38): Ոչ-դաշնակցական մամուլը, ընդհանրապէս, կը քննադատէ այս համաձայնագիրը ու իր քննադատութեան մէջ յաճախ կ'անդրադառնայ Ատանայի ջարդին մէջ Իթիհատի մեղսակցութեան հարցին: Հ.Յ.Դ. կը բացատրէ որ Իթիհատ սահմանադրութիւնը պաշտօնապէս զիսաւոր ուժն է եւ սահմանադրութիւնը ամբողջովն համար պէտք է թիկունք կենալ անոր: Հ.Յ.Դ. իր քարոզչութեան մէջ կը սկսի կամաց-կամաց անտեսել Ատանայի ջարդին մէջ Իթիհատի դերակատարութեան պարագան: 1910-ին լոյս կը տեսնէ Հ.Յ.Դ. յայտնի դէմքերէն Ատոմի (Յարութիւն Շահրիկեան) «Մեր Հաւատամքը» գրքոյկը. հեղինակը, կը քննադատէ «Թերահաւատները», որոնք «կիլիկեան աղէտը եւ անոր հետեւանք միջազգայնորէն սրտացաւութեան, ազգասիրութեան դիմակի տակ, ամենաճարպիկ ազգադաւուժեամբ» (39): Ապա կ'եզրակացնէ. «Կարող ենք ապահով ըլլալ, որ այլեւս ամենաճարպիկ դժբախտութեան պարագային, զէթ միայնակ կոտորուելու չենք: Կոտորելու եկող հորդաններուն դէմ թուրք եւ հայ, Իթիհատական ու դաշնակցական միասին կանգնած պիտի դիմաւորեն վտանգը» (40): Կանխակալ լաւատեսութիւն մը՝ որ դժբախտաբար իրականութիւն չզարձաւ: Հ.Յ.Դ.-ի մէկ այլ յայտնի ղեկավարներէն Ռուբէն Դարբինեան, իր «Իթիհատի եւ Դաշնակցութեան համաձայնութեան Շուրջը» առաջնորդող յօդուածաշարին մէջ, կը գտնէ թէ Ատանայի ջարդը այն աղէտալի փորձութիւնն էր, երբ մարդկանց իրքերը գրգռուած էին եւ զիտակցութիւնները՝ մթազնած, իսկ «Դաշնակցութիւնը, որ ամբողջ քաղաքական փորձը ձեռք էր բերած մըրիկներու եւ փոթորիկ փոթորիկներու մէջ, չկորսնցող իր հոգեկան հաւասարակշռութիւնը... եւ քաջութիւնն ունեցաւ հասարակական այդ բնագոյններու գրգռուած վիճակին մէջ ընտրել այն միակ ճամբան, զոր կը թելադրէր մեր ընդհանուր շահերը եւ ո՛չ թէ զգացումները,- դաշինք կնքեց Իթիհատի հետ» (41):

Յաջորդող տարիներուն Հ.Յ.Դ.-Իթիհատ համագործակցութիւնը կը խորանայ եւ 1912-ի Փետրուարին, օսմանեան երեսփո-

խանական ընտրութիւններուն ընդառաջ կը կնքուի Հ.Յ.Դ.-Իթիհատ ընտրական դաշինքը: Այս առիթով վերստին կ'արծարծուի Ատանայի ջարդին Իթիհատի մեղսակցութեան հարցը: Ապրիլ 9-ին, Գում Գաբուի մէջ Հ.Յ.Դ.-ի կողմէ կազմակերպուած ընտրական հաւաքին, Գ. Զօհրապ կը յայտարարէ թէ հայերուն աջակցութիւնը Իթիհատին «Քաղաքական իմաստութեան մէկ գեղեցիկ արտայայտութիւնն է» (42): Նոյն հաւաքին, Հ.Յ.Դ. յայտնի դէմքերէն Գարեգին Խաթակ (Չագալեան) կը յայտարարէ որ թուրքերու հետ գործակցութեան ժամանակ սխալ է Ատանայի ջարդին հարցը հարապարակ նետել: Այդ օրերուն, Հ.Յ.Դ. Արեւելեան Ամերիկայի օրկան «Հայրենիք»-ը աւելի յառաջ երթալով կը գրէ. «Ամէն չարիքի տակ բարիք կայ պահուած խօսքը իրականութեան երանգ կը ստանայ Ատանայի համար: Կոտորածը իր շատ տխուր հետեւանքներուն հետ, միութարական կողմեր ալ երեւան բերաւ, անիկա շառաչելու ապտակ մըն էր տրուած համայնքի մը, որ ապուշ թմբիրի մատնուած առ յաւէտ

մահանալու անվրէպ վտանգին առջեւ կը գտնուէր: Այդ ուժանակի ցնցումին կը պարտինք թերեւս մեր պայտուան կենսատու արթնութիւնը. առանց այդ հարուածին, գուցէ, մենք շարունակէինք մեր վտանգաւոր մրափը, խորթացումի կամ ձուլումի սահուն գառիթափին վրայ» (43): Կ. Պոլսոյ Մ.Դ.-Հ.Կ.-ի պաշտօնաթերթ «Նոր Աշխարհ»-ը, մէջբերումներ կատարելէ ետք այդ յօդուածէն, քմծիծաղի կ'ենթարկէ արտայայտուած տարօրինակ տեսութիւնը ու կը գրէ. «Ալ լաւ չէ՞ք ընէր երթալ Համիտին ձեռքն ալ պահելու, որ բարեհաճեցաւ 300,000 հայեր կոտորել, աւելի մեծ բարիք մը ընելով հայութեան...» (44):

Ատանայի ջարդը, դժբախտաբար հայոց պատմութեան վերջինը չեղաւ: Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին գործադրուած Հայկական Ցեղասպանութիւնը իր շուքին տակ ձգեց բոլոր նախորդները, հաստատելով նաեւ որ Իթիհատ հակամէտ է նման անմարդկային արարքներու:

(Վերջ)

- Ծանօթութիւն
- 18. «Կիլիկիոյ Աղէտը»,... էջ 245:
- 19. «Մշակ», 1909 Ապրիլ 30:
- 20. «Մշակ», 1909 Յունիս 31:
- 21. «Մշակ», 1909 Մայիս 17:
- 22. «Ազատամարտ», 1909, Յունիս 23/6 Յունիս:
- 23. «Կիլիկիոյ Աղէտը»,... էջ 265:
- 24. «Մշակ», 1909 Յունիս 31:
- 25. «Կիլիկիոյ Աղէտը»,... էջ 686:
- 26. «Պատասխանատուները», Ա. Սապահ Գիւլեան, Պէյրութ, 1974, էջ 112-117:
- 27. «Հայերի Ցեղասպանութիւնը...», էջ 237:
- 28. «Հանրմիջակայքի Պատմութիւն», Յակոբ Պողոսեան, Լոս Անջելէս, 1942, էջ 575-577:
- 29. «Կիլիկիոյ Աղէտը»,... էջ 341:
- 30. «Հանրմիջակայքի Պատմութիւնը...», էջ 577:
- 31. «Մշակ», 1909 Սեպտեմբեր 16:
- 32. «Մշակ», 1909 Հոկտ. 1 եւ Հոկտ. 13:
- 33. «Մշակ», 1909 Հոկտ. 1 եւ Հոկտ. 10:
- 34. «Ատանայի եղեռնը (Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի)», Կ. Պոլիս, 1919 էջ 30:
- 35. Նոյն, էջ 36:
- 36. «Ազատամարտ», 1909 Յունիս 4/17:
- 37. «Ազատամարտ», 1909 Օգոստոս 24/Սեպտեմբեր 6:
- 38. «Ազատամարտ», 1909 Սեպտեմբեր 8/21:
- 39. «Մեր Հաւատամքը», Ատոմ, Կ. Պոլիս, 1910, էջ 16:
- 40. Նոյն, էջ 106:
- 41. «Ազատամարտ», 1910 Սեպտ. 16/29:
- 42. «Ազատամարտ», 1912 Մարտ 30/12 Ապրիլ:
- 43. «Նոր Աշխարհ»-ը, 1912 Ապրիլ 4/17:
- 44. Նոյն:

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ Palm Springs

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուղի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝  
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

**Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել «Կայծ» Երիտասարդական Սիւնթեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:**

**G.Y.O.**  
1060 N. ALLEN AVE.  
PASADENA, CA 91104

Norserount@sbcglobal.net

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1661  
RE-ROOFING OF FOURTEEN (14) BUILDINGS AT SAN FERNANDO GARDENS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the re-roofing of fourteen buildings at San Fernando Gardens located at 10891 Lehigh Ave., Pacoima, CA 91331. Copies of the IFB may be obtained, at no charge, at the Authority's General Services Department, 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057. Copies of the IFB may also be downloaded from the internet at [www.hacla.org](http://www.hacla.org) under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Construction Goods and Services". Bids will be accepted at the same location until 2:00 p.m. (local time), February 27, 2009.

2/12, 2/19/09  
CNS-1521222#  
MASSIS WEEKLY

### ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՖՈՒԹՊՈԼԱՅԻՆ ՍԻՐՈՒԸՏՈՒՔԷՆ ԵՏՔ, «ՍԱՐԸ ԿԵԼԻՆ»Ի ԽԱՅԹՈՑԸ

#### Շարունակում է 1-էն

պարզ ու մեկիմ, պետական շահերի բնկադրումը դիւանագիտական մակարդակի խաղ մըն է հնացած, որ շահագործման ու խորհրդակցական կր դարձնէ թուրքիան:

Վերադառնալով մեր այսօրուան նիւթը հանդիսացող «Սարը Կելին» անունը կրող ժապաւէնին, յայտնեմք թէ կրթական նախարարութեան կից համաձայն նախարարութեան Ընդհանուր Տնօրէնութիւնը շրջաբերականները ցրում է դպրոցներում՝ խստիւ պատուիրելով անոնց, որ գայն ցուցադրեն աշակերտութեան: Իսկ, ի՞նչ են այն այն պատկերահանումները, նկարագրութիւնները, տեղեկութիւններն ու պատգամները որոնք պիտի բացայայտուին դպրոցներու աշակերտութեան, 1915-ի ի «ՊԱՏԱՀԱՄԱՐՆԵՐ» եւ կամ «Հայկական Հարցի Ծալներ» ընդհանուր վերտարութեամբ՝ թուրք սպայակոյտի նախագահութեան կողմէ պատկերահանում ժապաւէնին մէջ:

Մեր մեկնաբանութիւնները տալէ առաջ, աւելի լաւ պիտի ըլլար լսել նոյնիման թուրք մտաւորականութիւնը, որ լաւագոյնս բարգամը կը հանդիսանայ մեր մտորումներուն:

Համաձայն «Պիրկիլիմ»ի հարցազրոյցներուն, որոնց բարգամնաբար իրագրեց կը դառնանք Պոլսոյ մէջ յոյս ընծայող հայատառ «Մարմարա» օրաթերթէն, «Կիւնտեմ» Մանկանց Միութեան խօսնակներէն էսին Գոման խիստ մտահոգիչ կը գտնէ վերոյիշեալ շրջաբերականը, նկատելով որ ժապաւէնը երեխաներուն կը բարոզէ ՍԱՄՏԿՈՒԹԻՒՆ, ԽՏՐԱԿԱՆՆՈՒԹԻՒՆ, ԱՏԵԼՈՒԹԻՒՆ եւ ՈՇՐԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

«Ցեղապաշտութեան եւ Ազգայնամոլութեան Դէմ» միութեան բարձր ձեռնկիր Ալկան կը գտնէ, թէ ժապաւէնին մէջ ցոյց կը տրուին հայերու կողմէ սպանում թուրքերու լուսանկարներ, կը տրուին ծանօթագրութիւններ: Օրինակ.

Մոլեռանդ հայ ազգայնապաշտներ խեղաբիրած են հայկական հարցը, Անատոլուի մէջ կազմակերպած են ապստամբութիւններ, հայերը կազմակերպած են սպանումներ, հայահարեցնելով կազմակերպած են սպանութիւններ իմեմներու փաստելու համար:

Հոգեբանական հարցերու մասնագէտ Տէր. Արտար Տէրմէն-ճօղլու դիտել կու տայ, թէ այդ ժապաւէնին մէջ կը ձգուի այն տպաւորութիւնը թէ «հայերը գէշ մարդիկ են: Ասիկա ազգայնապաշտական յատկանշական կեցումն է»:

Վերջացնելու համար վկայութիւններու այս շարքը, մէքերեմք վերջապէս, ընկերային ծառայութիւններու մասնագէտ՝ Էմրան Բըրմանյանի մեկնաբանութիւնը, թէ «այսպիսի վաւերագրական ժապաւէն մը պատճառ կը դառնայ, որ մանուկներ իրենց միջեւ էքնիկ ու կրօնական խտրականութիւններ ստեղծեն»:

«Ներքին Ծալներ» ըսելով պիտի հասկնանք ուրեմն հայոց դէմարտական խեղաբիրութեան նոր ամբաստանութիւններ, ցեղախորհրդակցական գրգռութիւններ՝ անոնցմով փաստելու համար, որ հայերն են որ մեղանշած են թուրքիոյ դէմ՝ բրբական

հողերու տիրանալու մարմաջով: «Սարը Կելին» նորելու կ պատանիներու մէջ կիրքեր կը հրահրէ ընդհանրապէս բովանդակ հայութեան եւ մասնաւորապէս թուրքիոյ հայ համայնքի դէմ:

Տարակոյս չկայ, որ 2008-ի Սեպտեմբերին Հայաստան-Թուրքիա ֆութպոլային նկատումին առիթով, Հայաստանի եւ Թուրքիոյ նախագահներ՝ Սերժ Սարգսյանի եւ Ապտուլլա Կիլի երեւան մէկտեղուիմը լաւատեսութիւններ շնչեցնելու մը մը մէկուր, ի մասնաւորի հայրենի ու բրբական կարգ մը շրջանակներու մէջ:

Գտնուեցան մտածողներ, որոնք համարձակութիւնն ունեցան ամէն բանէ վեր դասելու թուրքիոյ հայր դրացնութեան գաղափարը, թուրքիոյ կողմէ սահմանային շրջապատման վերացումը եւ երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու բնականոնացումը:

Անոնք, այսպէս խորհողները, առաջ մղեցին այն վարկածը, թէ Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ բարեկամական կապերու սերտացումը, յետագային պիտի օգնէր լուծելու երկու երկիրներու միջեւ առկայ այն հիմնախնդիրները, որոնք կը սահմանուէին անշուշտ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգաւորմամբ, ցեղասպանութեան նախադրումով, Բոնագրաւում հողերու վերադարձով եւ Ցեղասպանութեան հատուցումով: Այդպէս խորհող մեր նորարար առաջնորդները խոսեմութիւն թելադրեցին, որ մեր երկու ազգային պահանջատիրական հարցերու կապառիչը շրջան մը չբանաւնէ, ինչպէս ըրաւ մեր նախնայիններէն Նախագահ Սերժ Սարգսյանը, 2008-ի Սեպտեմբերի նախագահական ֆութպոլային սիրուրտուիմն՝ ի մեծ գոհունակութիւնն ու գարմանք իր մեծանուն հիւրին, Ապտուլլա Կիլին, որ ի տես տես իր հայ խօսակցիցին շրջահայեցողութեան, իր հիացումը յայտնեց Անգարա վերադարձին: Արդիւմէր՝:

Սպայակոյտի «Սարը Կելին» ժապաւէնը եւ անոր յարակից կրթական նախարարութեան շրջաբերականը:

Մինչ մեր նախարարութիւնները տակաւին ֆութպոլային թմրադեղի ազդեցութեան տակ արդիւնաբեր բարեկամական կապերու սերտացման սպասումին մէջ կը գտնուին, վարդագոյն երազներ կը հիւսեն Կիլի երկրորդ գոյգահեռ, անդին, նոյն այդ երկրի կրթական նախարարութիւնը շրջաբերականներ կը բաժնէ իր դպրոցներուն, անոնց աշակերտներուն ցուցադրելու համար ժապաւէն մը, որ կոչուած է էքնիկ ու կրօնական խտրականութիւններ սերմանել, ատելաբան գրգռումներ աւելցնել, ոճրային տրամադրութիւններ առաջացնել, սաստկութիւնն ու այլ չարիքներ մտնել տալ հասակ առնող թուրք մտադաշ աշակերտութեան մէջ: Իսկ, ամենէն գարշելին՝ սխալ, շինծու, այլ՝ պատմական հիմունքներէ գուրկ գիտելիքներով հարստացնել իրենց վաղուան առաջնորդները:

Հրանդ Տիմր գգեմնող թուրքի փոքր տարիքի ոճրագործ մը չէ՞ր միթէ.

Ա.հա «Սարը Կելին»ի մահացում խայրոցը:

### ՅԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒԻ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՆՈՒԹԻՒՆ ԳՈՆԿՐԵՍԷՆ ՆԵՐՍ

#### Շարունակում է 1-էն

Իրենց պաշտօնակիցներուն ուղրուած նամակին մէջ, օրէնսդիր ժողովի չորս անդամները կը հրահրեն միւս անդամները, որպէս ստորագրեն ու դառնան հովանաւոր եւ գորավիզ կանգնին Բանաձեւին, երբ այդ պաշտօնապէս ներկայացուի:

Գոնկրէսի նախորդ նստաշրջանի ընթացքին Հայկական Ցեղասպանութեան բանաձեւը ապահովեց 212 հովանաւորներ եւ վաւերացուեցաւ Արտաքին Ցարաբերութեանց Ցանձնաժողովին կողմէ: Նախկին Նախագահ Ճորճ Պուշ եւ իր վարչախումբը խոչընդոտեցին Բանաձեւի քուէարկութիւնը Ներկայացուցիչներու Տան ընդհանուր ժողովին կողմէ:

«Մենք մեծապէս կ'ողջունենք

### ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՒ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԶԻՒՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

#### Շարունակում է 2-էն

կարա միսը, կաթնեղէնը, ֆօսֆօր եւ մանկէզի պարունակող նիւթերը: Լաւ է միշտ քիչ մը անօթի ելլել սեղանէն եւ մէկ ժամ ետք աշխատելու սկսիլ: Թէչը, սուրճը եւ մանաւանդ ալքօլն ու ծխախոտը մահացու են չիշողութեան. իսկ շնչառական մարզանքը օգտակար է միշտ:

#### ԶՕՐԱՒՈՐ Է ԶԵՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ փորձը կրնայ գաղափար մը տալ այդ մասին:

Երկու անգամ բարձրաձայն կարդացէք: Մատիտ, գիրք, գրիչ, կաղամար, տետրակ:

Յետոյ նոյն կարգով մտովի կրկնեցէք: Տասը վայրկեան ետք առանց ցանկին նայելու վերսկսե-

նամակի չորս հեղինակները, իրենց դեկավար դերին ու անգամ մը եւս Հայկական Ցեղասպանութեան հարցը Գոնկրէսին ներս պաշտպանելուն համար», - յայտարարեց Հայ Ամերիկեան Խորհուրդի ատենապետ Վազգէն Խոտանեան: «Ներկայացուցիչներու Տան, Ծերակոյտի եւ Սպիտակ Տան մէջ մեր ունեցած պաշտպաններու շնորհիւ, կացութիւնը աւելի դրական է, որպէսզի վերահաստատուի Ամերիկայի դիրքորոշումը՝ Հայկական Ցեղասպանութեան հարցով», աւելցուց ան:

Հայ Ամերիկեան Խորհուրդը կը քաջալերէ ամերիկահայ համայնքի անդամները, կապուելու իրենց ներկայացուցիչներուն հետ, որպէսզի անոնք դառնան Հայկական Ցեղասպանութեան բանաձեւի հովանաւորներ:

ցէք: Եթէ այս երկրորդ անգամին չիշողիք նոյն կարգով բոլոր առարկաները թուել, լաւ չիշողութիւն ունիք: Եթէ նոյնիսկ այդ առաջին անգամին սխալած էք, ձեր չիշողութիւնը շատ տկար է:

Նոյն փորձը կարելի է, իրերու անունին տեղ թուանշաններ դնելով, օրինակ 7, 6, 9, 3:

Աւելցնենք որ չիշողութեան քանի մը տեսակներ կան: Ոմանք աւելի լաւ միտք կը պահեն ինչ որ կը տեսնեն, ուրիշներ ինչ որ կը լսեն, կամ կը շօշափեն: Ոմանք հոտերու արտակարգ չիշողութիւն մը կ'ունենան: Մարդիկ ալ կան որ երկրաչափական ձեւերով միտք կը պահեն որեւէ բան, ուրիշներ թուանշանները բնաւ չեն մոռնար, իսկ չիշողութեան տկարացումը կը սկսի շատ անգամ անուններուն մոռացումով:

### ԳՆԱՐԱՏԱՆԸ

Մի ոմն գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը եւ աշխատակազմը, \$50 տոլար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին: Ինչպէս նաեւ գնահատելով «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան գործունէութիւնը \$30 կը նուիրէ «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան:

### ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսաբուժութեան կեդրոն  
ղեկավարութեամբ՝  
Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի  
Փասսատիմայի մէջ  
Ամէն օր՝  
առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ  
կ.ե. ժամը 3:00

Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104  
Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

- «Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.
- Մարմնային ֆունկի հիւանդութիւններ, արեան գերնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալկոլ, թմրադեղեր, եւայլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անքնութիւն, եւայլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:
- Ուսումնական եւ սրբօրային բարեկարգում

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՓՐԻԿԵ 2010 ՖԻՖԱ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՇԱՐՔ

### ՀԱՄԱԴՐԵՑՑՑ Ա. ՊԷԼԵԱՆ

#### 500 ՕՐԵՐ ԵՏՔ ԿԸ ՍԿՍԻ ԱՓՐԻԿԵԻ ՄՈՆՏԻԱԼԸ

2010ը թուականին առաջին անգամ ըլլալով ֆուտբոլի աշխարհի ախոյեանութեան մրցաշարքը տեղի պիտի ունենայ Ափրիկէի ցամաքամասի վրայ եւ նախապատուութիւնը տրուած է Հարաւ Ափրիկէի հանրապետութեան, որ տենդագին գործի լծուած է իրականացնելու այս վիթխարի ծրագիրը բայց կը դիմակալէ կազմակերպչական լուրջ դժուարութիւններու:

Սակայն ՖԻՖԱ-ն որ միջազգային ուժեղ կազմակերպութիւն մըն է, ամէն տեսակէտով թիկունք կը կանգնի կազմակերպողներուն: Վերջերս ՖԻՖԱ-ի նախագահ Ժոզէֆ Պլաթիլը հարցազրոյց մը տալով այս առնչութեամբ, ըսաւ. «Կը վստահինք Ափրիկէի» եւ իր ուրախութիւնը յայտնեց որ 500 օրեր ետք, Հարաւ Ափրիկէի մէջ, կը սկսի Մոնտիալի մրցաշարքը: Ան գնահատանքով արտայայտուեցաւ այդ երկրի մասին եւ ըսաւ որ երիտասարդ հանրապետութիւն մըն է, բայց կազմակերպուած է եւ պիտի իրագործէ մրցաշարքը կարելի լաւագոյն մակարդակով:

Փ. Պլաթիլը, նաեւ վստահեցուց որ տնտեսական ճգնաժամը ազդեցութիւն պիտի չ'ունենայ Մոնտիալի վրայ, որովհետեւ, ՖԻՖԱ-ն շատ ուսումնասիրած, լաւ պատրաստած եւ վաւերացուցած է անոր ելեւմտացոյցը:

Այս առնչութեամբ, ՖԻՖԱ-ի ընդհանուր քարտուղարը՝ Խէրոմէ Վալդէ ըսած է. «Հաւանական է, որ այս անգամ չունենանք միեւնոյն շահոյթները, ինչպէս 2006ի Մոնտիալին: ՖԻՖԱ-ի համար կարեւոր է դրամ չահիլ Ափրիկէի մէջ: Ափրիկեցիները պէտք է վայելեն իրենց



սեփական Մոնտիալը»:

Հարաւ Ափրիկէի 2010 Մոնտիալը հրաշալի առիթ մը պիտի ըլլայ, որ աշխարհի չորս ծագերէն բազմահար մարդիկ գան եւ ծանօթանան այդ չնաշխարհիկ ցամաքամասի գեղեցկութիւններուն եւ անոր հիւրընկալ ազնիւ ժողովուրդին:

Ֆուտբոլի հանրածանօթ նախկին աստղերը Փէլէ, Զիտան, Փլաթիլնի, Պէքընպաուըր եւ անշուշտ Մարատնա, որպէս Աժմանթիսի հաւաքականի մարզիչ, ներկայ պիտի գտնուին մոնտիալին աւելի փայլ տալու անոր:

Պէտք է մատնանշենք, որ Հարաւ Ափրիկէի գուզահեռ, Պրագիլ ալ գործի անցած է: Ան ստանձնած է կազմակերպել 2014ի մոնտիալի մրցաշարքը: Այս օրերուն հոն կը գտնուի ՖԻՖԱ-ի նախագահը եւ նկատի ունենալով որ Պրագիլը շատ ընդարձակ երկիր մըն է, մրցաշարքը պիտի խողցուի 12 քաղաքներու մէջ: Յիշենք, որ Պրագիլ առաջին անգամ կազմակերպեց Մոնտիալը 1950ին եւ կառուցեց Մարաքանա մարզադաշտը, որ կը պարփակէ 200 հազար հանդիսականներ: Ան հինգ անգամ շահած է աշխարհի ախոյեանութեան բաժակը:

## ԱԼԲԵՐՏ ԱԶԱՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 80-ԱՍԵԱԿ ՕՂԱԿՆԵՐԻ ԱՐՔԱՆ ԴԵՌ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻ

### ՄԱՐԻԱՆՆԱ ԳԻԻՐՁԵԱՆ «ՌԱՏԻՈՒՈՒՐ»

Նախորդ դարի 50- ականների կէսերից Ալբերտ Ազարեանի կատարած «Խաչը» ստացել է «Ազարեանական խաչ» անուանումը: Մինչ այդ ոչ ոքի կողմից չկատարուած դժուարին վարժութիւնը պատահական ստացուեց, թէ ոչ:

Մարգիկը պատմում է, որ Խորհրդային Միութեան պատուիրակութեան միւս անդամներին անարդարացիօրէն ցածր էին գնահատում եւ ինքը ըմբոստացաւ իւրովի՝

«Օղակներից բռնուած թեքուելով չորս մրցավարներին՝ հարցրել եմ՝ հերիք է: Ինքնին ստացուեց»:

1952- 1962թթ.-ին Ազարեանը 11 անգամ դարձել է ԽՍՀՄ ախոյեան, այդ թվում նաեւ ութ անգամ՝ օղակներով վարժութիւններում: 1954-1958թթ.-ին Ազարեանը եղել է աշխարհի ախոյեան օղակներով վարժութիւններում, իսկ 1956 - 1960 թթ.-ին՝ Օլիմպիական խաղերի ախոյեան:

Որպէս հայ օլիմպիական առաջին ախոյեաններից մէկը՝ 2004 եւ 2008 թթ.-ին Աթէնքի եւ Փեքինի Օլիմպիական խաղերի բացման արարողութեան ժամանակ Ազարեանը եղել է Հայաստանի դրօշակակիրը: Վստահութիւն կայ, որ յաջորդ օլիմպիական խաղերին Հայաստանը աւելի շատ մետալներ է նուաճելու:



Ղեկավարելով մարմնամարզութեան ֆեդերացիան՝ Ալբերտ Ազարեանը գլխաւոր խնդիրը համարում է մարմնամարզութեան մասսայականութիւնը:

«Միայն շրջանների երեխաներն են, որոնք կարող են մարմնամարզիկ դառնալ: Նրանք ակնյայտ լաւ մարմին ունեն»:

Նշենք, որ Փետրուարի 17-ին Օպերայի - բալետի ազգային ակադեմիական թատրոնում մեծ շուքով անցկացուելու է Ալբերտ Ազարեանի ծննդեան 80- ամեակին, կամ ինչպէս ինքն է ասում՝ 40- ամեակին նուիրուած յոբելիանական հանդիսութիւնը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ 2 ԱԹԼԵՏՆԵՐ ԿԸ ՍԱՍՆԱԿՑԵՆ ԵՐՈՊԱՅԻ ՉՍԵՌԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆԸ

Աթլետիկայի Եւրոպայի 2009թ. առաջնութիւնում Հայաստանը կը ներկայացնեն 2 հեռացատկորդներ որոնք Մարտի 5-ից 9-ը Իտալիայի Թուրին քաղաքում կը մասնակցեն Եւրոպայի առաջնութեանը:

Տղամարդկանց պայքարում կը մասնակցի Արսէն Սարգսեանը եւ կանանց պայքարում Հայկանուշ Բեգլարեանը:

# BIG BEAR 2009

\$120 GENERAL  
\$110 FAMILIES OF 3 OR MORE  
\$100 ATHLETES

INCLUDES:  
ROOM AND BOARD  
FOOD  
GAMES  
FUN

February 20th-22nd

Homenmen is hosting its annual  
Big Bear Winter Getaway!

Bring your friends and family  
along and join the fun!

FOR RESERVATIONS  
(818)590-2824  
RAZMIG



Hosted By



Location



